



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Դիմք 40 կոպ.

Цена 40 коп.

Մ Գ Ի Գ Ա Յ Ա Ն

ԽՈՐՃՐԴԱՑԻՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՑԻՆ

Ա Ռ Ե Վ Տ Ր Ի

ԹԱՎԱԼՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

38(47)

4-56

ԿՈՒՆՈԿՑՈՒԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
Ո-ԽՍՑՈՎ-ԴՈՆ 1932 թ.

06 APR -10

Н А Р М  
3-2632

38(47)  
4-S6

Ա Գ Գ Ա Բ Ա Հ Ա Յ Ա Ն

ԽՈՐՀՐԴԱԿԱՑՄԱՆ ՁԵՎ ԿՈՏՏԵՄԱԳԻՆ

Ա Ր Ե Վ Տ Ր Ի

ԾԱԿԱԼՈՒԱՆ ԽԴԻՐՆԵՐԸ

1522

Г.П.Б. в Лнгр.  
Ц. 1933 г.  
Акт № 17

ԿՈՒՍՈՎՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՑԱՐՈՎՈՒԹՅՈՒՆ  
ԽՈՇՈՎՈՒԹՅՈՒՆ 1932 թ.

19.03.2013

54.955

М. ГИГОЯН

# ВОПРОСЫ РАЗВЕРТЫВАНИЯ СОВЕТСКОЙ И КОЛХОЗНОЙ ТОРГОВЛИ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կումոնիստական կուսակցության կենտրոնը և ժողովրդական Կոմիտարների խորհուրդը վերջերս հրատարակել են հացամթերման ու հացի կոլտնտեսային առեարի, անասնամթերման ու մսի կոլտնտեսային առեարի և այդ առեարի կարգի մասին վորոշումներ, վորոնցով հացամթերման ու անասնամթերման պլանը կատարած կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու անհատավար դյուզացիներին իրավունք և արվում ազատ կերպով, առանց վորեն արգելքների, ծանելու իրենց հացի և անասնապահական մթերքների ապրանքային ավելցուկները: Այս վորոշումները յեկան լրացնելու այն, ավելի առաջ հրատարակված, վորոշումները, վորոնք արգելում եյին կոլտնտեսականների ունեցած կովի, մանր անասունների, թաշունների և բանջարանոցների ու բաղանների համայնացման վորձերը: Այս բուօր վորոշումները, ինչպես նաև կուսակցության XVII կոնֆերանսի վորոշումները շատ մեծ նշանակություն ունեն ապրանքաշրջանառության լայն ծավալումը «Ամբողջ ժողովրդական տեսեսության վերելիքի բոլշևիկյան քափերն ապահովելու յեկ բաղայի ու զյուղի մասսաների կարիքները լայն սպառման ապրանքների կազմից ավելի լավ բավարարելու նաև առաջ ունեն մի նպատակ, այն է՝ «ամենակարեւոր խրանն են հանդիսանում մեր տեսեսության մեջ յեղած անազին բանակությամբ դեռյեկա ամբողջութին չոգագործված ներքին ուղղերթները դրանքի համար» (XVII կուսակոնֆերանսի վորոշումից):

Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը այդ վորոշումներով ասում են, վոր մեր յերկը սոցիալիստական զարգացման ներկա հոտապում և խորհրդային առեառուր այն միակ ձեւն է, վորը ապահովում մեր տնտեսության մեջ յեղած և գեռ չոգագործված միջոցների հայտարերելը և նըանց սպառողին հասցնելը:

Այս վորոշումները պարտավորեցնում են մեր վաճառող ու կոռպարտատիվ որդաններին նոր ձեռվ կազմակերպելու իրենց աշխատանքները, հետ քաշվելու այն սխալ ու վնասակար գատարկ խոսքերից, թե «ապրանքները քիչ են», «ապրանքներ չկան» և ծավալել, խորհրդային առեարի հիման վրա, ապրանքների շրջանառությունը:

ПАРТИЙНОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
РОСТОВ и.д.

189-87

Այս վարոշութենքը պարտավորեցնում են կոլանտեսություններին կոլտնտեսականների և անհատավար գյուղացիներին ավելացնելու դաշտերի բերքատվությունը, լուծելու աշխատանքների կաղաքակերպման և արտադրողականության խնդիրները, դարձ տալու անասնաբուժության, ճագարաբուժության, թոչնաբուժության, բանջարաբուժության և այլն ճյուղերի դարձացման և ապրանքային ավելցուկների արագ աճմանը:

Վերջապես այս վարոշութենքը պարտավորեցնում են թեթև արդյունաբերության ու տնայնագործության բոլոր ձեռնակների, ինչպես նաև ծանր արդյունաբերության վորոշ ճյուղերին, սդուագործելու բոլոր ներքին սեսուրաններն ու ննարավորությունները, ավելացնելով լայն սպառման ապրանքների արտադրությունը:

Կուսակցության և Խորհրդային իշխանության այս վորոշութենքը պատահական ակտեր չեն, այլ բգխում են մեր յերկրի սոցշինարարության ներկա ետապի պայմաններից: Հիմա, յերբ «տնտեսության կոլտնտեսային և խորհունտեսային սիստեմի՝ անհատական տնտեսության գեմ տարած հաղթանակի և գյուղի կուլակային տարրերի ջախջախման հիման վրա» մենք ճեռք ենք բերել ահադին հաջողություններ հացի արտադրման գործում, յերբ անասնաբուժության կոլտնտեսային և խորհունտեսային ձևերի զարգացումը զրվել է հաստատ հիմքերի վրա, յերբ «սիփամանակ արզյունաբերության ասպարեզում, հնգամյակի իրագործման հետեւնքով, դնալով անում են Խորհրդային Միության հնարավորություններն արդյունաբերական ապրանքներ արտադրելու բնագավառում, ինչպես կոլտնտեսությունների արտադրանքն, նույնպես ել դյուզի աշխատավորների սպառողական կարիքները բավարարելու համար», խորհրդային ու կոլտնտեսային առևտությամբ միայն կարելի յէ հայտաբերել, «Հավաքել ցրված ապրանքական արժեքները յեվ կյանքի կանչել նոր արժեքներ»: (1.Ենթ.)

Խորհուրդների Միությունն այսոր հասել է այն ետապին, յերբ սոցիալիստական կոնսոմիկայի հիմքի կառուցումից հետո, մենք անցել ենք մեր ամբողջ տնտեսության սոցիալիստական տեխնիկական վերակառուցման և յերբ այս պրոցեսի հետ զուղընթաց արագ տեմպերով բարձրացել է լայն աշխատավոր մասսաների սպառման մակարդակը: Մենք ունենք հզոր սոցիալիստական արդյունաբերություն, վորը հենց այսոր հայթայթում ե ահադին քանակությամբ արդյունաբերական և լայն սպառման ապրանքները: Մեր կոլտնտեսություններն ու խորհունտեսություններն այսոր իրենց կազմակերպչական-տնտեսական խնդիրների լուծման դուզընթաց, կարող են և տալիս են արդեն ահադին քանակությամբ ապրանքային ավելցուկները: բանվորների ոեալ աշխատավարձի բարձրացումը, գործադրկության վերացումը, կոլտնտեսա-

կանների և բոլոր աշխատավոր մասսաների նյութական դրության բարելավումը, ահադին պահանջ են ներկայացնում գյուղատնտեսական մթերքներին, հումույթին և արդյունաբերական լայն սպառման ապրանքներին:

Թե ինչ չափով և աճել ապրանքների մանրածախսի շրջանառությունը, ցույց են տալիս հետևյալ թվերը՝

1927—28 թվին ապրանքների մանրածախս շրջանառությունը հավասար եր 15.4 միլիարդ ոուրլու, 1929 թվին՝ 26.9 միլիարդի և 1932 թվին՝ ըստ պլանի լինելու յէ 35.5 միլիարդ ոուրլի:

Այս թվերը պացույց են մեր յերկրի ռեսուրսների չափականց արագ աճին: Սակայն մինչև հիմա յել դեռ չի վերացվել այն ձեղքը՝ վերացների աճի և նրանց բավարարման միջև: Չնայած ապրանքների աճին, պահանջները մնում են չբավարարված: Յեկ այստեղ խնդիրը վոչ թե նրանում ե, վոր ապրանքները քիչ են, ույլ նրանում, վոր մեր առևտություղ զրագվող որգանները, չեն կարողանում ծավալել խորհրդային առևտությը: Վերջերս առևտրական որդանների գործունեությունը սահմանափակվում եր նրանով, վոր նրանք կենտրոնացրած պլանի հոմաձայն, բաժանում եյին ապրանքները: Նրանց պրակտիկան հակվում եր դեպի «Ճախ» ֆրազները թե արդեն հիմա հարկավոր ե անցնել «Մթերքափոխանակության», թե «փողն արգեն մեռնում ե»: XVII.դ կուսակցական կոնֆերանսն այդ ֆրազները բնության վրա հակառակ կայացնելու հակառակ կայացնելու առջեւ առանձին նշանակութուն տրվեց ապրանքների շրջանառության լայն ծավալմանը:

«Հաճախ անգործությունը, խորհրդային առևտություղ կաղմակերպելու անընդունակությունը քողարկում են ընդհանություղ խոռքերով՝ «ապրանքներ քիչ են»: Այս, մեղ ապրանքներ չեն բավականանում, պահանջը անշափ աճել է: Բայց սխալ ե այն թե մեղանում ապրանքներ քիչ են: «Ապրանքների ահազին մասսան մեեն դեռ չեեն կարողանում ուղիղ ու ինչպես պետք ե հասցնել սպառողին: — ասել ե ընկ. Կազանովիչը, և զա միանգամայն ճիշտ է:

Այսոր հարցը զրված ե արդեն յեղած ապրանքները մի կողմից «ուղիղ յեվ ինչպես հարկեն ե հասցնել սպառողին», իսկ մյուս կողմից «կանչել կանչել նոր ապրանքային արգելեներ»: (Լենին)

Կարող ե հարց ծագել թե արդյոք չի նահանջում կուսակցությունները գլխավոր գծից, թույլադրելով կոլտնտեսային առևտությը, հացի և անասնաբուժական ապրանքների վաճառումը շուկայում: Զի նշանակում արդյոք, վոր մենք ուժեղացնում ենք զրանով նեպանաների, միջնորդ—սպեկուլյանտների դիրքը, թույլացնում ենք սոցիալիստական հարձակողականի թափ:

Այս հարցին պատասխանելու համար՝ հարկավոր ե պարզել, թե  
ինչ պայմանների մեջ ե տեղի ունենալու խորհրդային առևտուի ծա-  
վալումը: Ովքեր են այս առևտուի ժամանակ իրար գեմ կանգնում: Ո՞վ  
ե ողտվելու խորհրդային առևտուի ծավալման արդյունքներից և, վեր-  
ջապես, ինչպիսի պետքերի բավարարման համար են գործադրվելու խոր-  
հրդային առևտուից ստացված արդյունքները:

Խորհրդային առևտուի բովանդակությունը, խորը կերպով տար-  
բերվում ե վոչ միայն այն առևտուից, վորը գոյություն ունի կապի-  
տալիստական յերկրներում, այլ և այն առևտուից, վորը գոյություն  
ուներ մեղանում նեպի առաջին շրջանում: Հիմա առևտուը տեղի յե  
ունեն ում սոցիալիստական արդյունաբերության և զյուղում արգեն-  
տիրապետող սոցիալիստական սեկտորի միջև: Կապիտալիստական յեր-  
կրներում առևտուը հանդիսանալով ապրանքների աղատ շրջանառու-  
թյան միջոցը, ծառայում ե վորպիս հարստանալու և շահագործման  
աղբյուր: Առևտուականը, կապիտալիստական կարգերում հեշտությամբ  
կարող ե վերափոխվել ֆարբիկանտի, բանկիրի և այլն, վորովհետև նա  
աղատ կերպով կարող ե իր «վաստակած» փողերը վերածել ֆարբիկի  
շենքերի, մեքենաների, հումույթի և վարձու բանվորական ուժի: Այս-  
տեղ, կապիտալիստական յերկրներում, առևտուը վոչնչով չի սահմանա-  
փակված, բացի շուկայի «գների ազատ խաղից», բացի կապիտալիս-  
տական կոնկորենցիայից: Պարզ ե, վոր խորհրդային կարգերում այդ-  
պիսի առևտուը գոյություն չի կարող տեղի ունենալ: Նույնիսկ նեպի  
առաջին շրջանում, մեղանում, առևտուը կրում եր բոլորովին ուրիշ  
բնույթ: Առևտուը նեպի առաջին շրջանում պիտի ծառայեր քաղաքի  
սոցիալիստական արդյունաբերության զոդմանը բանը բուրժուական  
զյուղի հետ, պիտի ուժեղացներ սոցիալիստական սեկտորի դիրքերը  
ժողովրդական տնտեսության մեջ և ստեղծեր այն բաղան, վորը հնա-  
րավոր կղարձներ տերող ժողովրդական տնտեսությունը սոցիալիս-  
տական վերակառւցման յենթարկել:

Այս կապիտալիստական եկեմնաները, վարոնք առանձին պայ-  
մաններով մասնակցում ենին նեպի սկզբում առևտուին և վորոշ սահմա-  
նափակ չափերով կարող ենին ուսապարձել իրենց «վաստակները» կա-  
պիտալիստական տիպի ձեւն արկներ ստեղծելու համար, (կուրակային  
տնտեսություններ), բայց դրկված ենին խոշոր հողամասեր, ֆարբիկ-  
ներ, բանկեր և կապիտալիստական այլ խոշոր ձեռնարկներ ձեռք սե-  
րելու հնարակորությունից: Պրոլետարական դիկտուտուրան, անտեսա-  
կան «հրամայող բարձրունքները» դարձել եր ամբողջ բանվոր զա-  
սակարգի մոնուու համայնական սեփականության և զրկել մասնավոր  
մարդկանց խոշոր կապիտալիստական սեփականություն ունենալու իրա-  
վունքից:

Կոնցեսսիաների քաղաքականությունը, վորը չստացավ լայն գործ-  
ն սկան իրականացում, նմանապես հետապնդում եր այդ հիմնական  
սպատակը: Կոնցեսսիան ձեռարկները մնում ենին պրոլետարական պի-  
տության սեփականություն, վորի ուղարկործությունը վորոշ ժամանակով և  
վորոշ պայմանադրով սահմանված պայմաններով, պրոլետարական  
պիտությունը պիջում եր մասնավոր կապիտալիստներին:

Նեպի միջոցով պրոլետարիատը կարողացավ այնպես ամրացնել  
սոցիալիստական սեկտորի դիրքերը, թե քաղաքում և թե գյուղում,  
վոր լենինյան «ովում» հարցը վերջնականապես վճռվեց սոցիա-  
լիզմի ոգտին:

Ներկա պայմաններում, առեվտրի ծավալման բազան են հանդիսա-  
նում ամենից առաջ առ բանած անած սոցիալիստական արդյունաբե-  
րությունը յել զյուղում արդեն տիրապետող սոցիալիստական ձեվերը—խորհ-  
ունեսություններն ու կոյտեսությունները: Այս նշանակաւ ե, վոր խորհ-  
ունի առեվտրի ծավալման բազան զգալիուն ամրացել յեվ, նետվա-  
պես, սեղնվել են ավելի լավ պայմաններ պրոլետարական դեկավորու-  
թյան հետագա ամրացման համար զյուղի վրա յեվ անել են մեր հնարա-  
վորությունները մասսաների արդյունաբերական յեվ պարենավարման ապ-  
րանքներով մատակարարելու բարելավման գործում» (Վ. ՄՈՂԱՏՈՎ)

Յեթք նեպի սկզբնական շրջաններում առևտուի միջոցով պրոլետա-  
րիատը կարողացավ պայքարել և հաղթել կապիտալիստական եկեմնան-  
ներին, կառուցել սոցիալիստական եկոնոմիկայի բազան, ապա ներկա  
ետապում, յերբ սոցիալիզմն իր հաղթական արշալին և կատարում,  
յերբ յերկրորդ հնագայակի քաղաքական խնդիրն և ևլապիտալիստա-  
կան ելեմենտների և առհասարակ զասակարգերի վերջնական լիկի-  
գացիան և զասակարգային տարբերությունները և շահագործում ծնող  
պատճառների լրիվ վերացումը, կապիտալիզմի մատուցումների հաղթա-  
հարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ յերկրի ամ-  
բողջ աշխատավոր բնակչության դարձնելը անդամակարգ սոցիալիս-  
տական հասարակության գիտակից և ակտիվ կառուցուներին: Խոր-  
հրդային առևտուի ծավալումը կարող ե հանդիսանալ և հանդիսանում  
ե, վորպիս սոցիալիստական արշալի մի միջոց, վորպիս սոցիալիստա-  
կան վերաբարերման թափերի արագացման մի աղբյուր, վորը իրա-  
կանացնելու և այդ խնդիրը:

Այս բոլորից մենք կարող ենք յեղբակացնել վոր խորհրդային  
առևտուի զարգացումը վոչ մի գեպքում չի կարելի կուսակցության զըլ-  
իական զժից նահանջ համարել: Ընդհակառակը, նա խորհրդային առև-  
տուի զարգացումը, սոցիալիստական ընդհանուր հարձակողականի  
իրագործման ձեւերից մեկն ե, սոցիալիստական լայնացրած վերա-  
տադրման աղբյուրներից մեկը:

Առեւտուըլլ այստեղ տեղի յեւ ունենում բանվոր դասակարգին պատականող սոցիալիստական ձեռնարկների և կոլտնտեսային սոցիալիստական ձեի ձեռնարկների միջն, նրանց ստացված արդյունքները կողտադորձվեն սոցիալիստական արդյունաբերության ել ավելի արագ տեմպերով զարգացման համառ, կոլտնտեսությունների կաղմակերպչական տնտեսական ամրացման, նրանց հետագա արագ զարգացման ու ուժեղացման համար: Նրանից ստացված արդյունքները, հետեապես, կզնան ել ավելի բարձրացնելու բանվոր դասակարգի և կոլտնտեսականների տնտեսական ու կուլտուրական դրությունը: Նույնիսկ անհատավար գյուղացիական սեկտորը, ներկա պայմաններում չի կարող այլ ևս ոգտագործել խորհրդային առևտորի արդյունքները կուլակային տնտեսություն ստեղծելու նպատակով, վորովհետև ներկա պայմաններում (կուլակներին վորպես դասակարգ վերացնելու լողունզը հիմնականում իրադորած լինելու պայմաններում) անկարելի յեւ, արգելվում ե շուշկայում ձեռք բերել կուլակային տնտեսություն ստեղծելու համար հարկավոր արտադրական միջոցներ և վարձու բանվորական ուժ: Նույնիսկ այդ սեկտորում խորհրդային առևտորի արդյունքները կդնան հատկապես աշխատավոր անհատավար գյուղացիների սպառողական պետքերն ել ավելի լայն չափերով բավարարելու գծով:

Խորհրդային առևտուըլլ ներկա պայմաններում կարող ե կատարվել առանց մասնավոր առևտրականի միջնորդության: Մեր կոռպերացիան և պետական վաճառող որդանները, հիմա արգեն ընդունակ են կազմակերպելու ապանքների շրջանառությունն առանց շմասնավորին: Այդ բանի վրա յեւ հիմնված վերջին վորոշումների պահանջը մասնավոր առեւտրականներին, միջնորդապետիկուլյանաներին առնարից հեռացնելու և նրանց գեմ անխնա պայքարելու մասին:

Ցեվ, վերջապես, խորհրդային առևտորի ծավալումը խթան և ստեղծում կոլտնտեսություններում, կոլտնտեսականների չհամայնացրած տնտեսություններում, անայնադորձական արտիեներում և սոցիալիստական արդյունաբերական ձեռնարկներում ավելի արագ կերպով և ավելի խոր ուշադրությամբ զարկ տալ այն մթերքների և ավանքների արտադրության, վորոնք կարող են բանվորական կենտրոններին տալ պարենավորման հավելյալ ուսուրսներ, իսկ կոլտնտեսականներին—նրանց աճող սպառողական պահանջներին բավարարելու համար, լայն ասպառման ապրանքներ:

Մենք տեսանք, վոր խորհրդային առևտորի ծավալումը սոցիալիստական հարձակողականի ձերից սեկն ե, և ուղղված է սոցիալիստական շինարարության ամրացմանը:

Ինչպես տեսանք, խորհրդային և կոլտնտեսային առևտորի ծավալան համար հարկավոր է վորոշ բազա: Այդ բազան սոցիալիստական

արդյունաբերությունն ե մի կողմից և կոլտնտեսային գյուղատնտեսությունը՝ մյուս կողմից:

Քաղաքի սոցիալիստական արդյունաբերության և գյուղի սոցիալիստական սեկտորի զողումն ե, վոր կարող ե առաջացնել կոլտնտեսային առևտորի ծավալման խնդիրը: Դեռ մի յերկու—յերեք տարի առաջ, յերբ կոլտնտեսային շարժումը զեռ նոր եր սկսվել յերբ կոլտնտեսությունները զեռ չեյին ամրացել ու վոտքի կանգնել և յերբ կոլտնտեսությունների արտադրական հնարավորություններն այնքան ել մեծ չեյին, բնականորեն չեր կարող հարց ծագել կոլտնտեսային առևտորի ծավալման մասին:

Խորհրդային առևտուըլլ չեր կարող ծավալվել նաև անհատավար տնտեսությունների տիրապետման ժամանակ, վորովհետև մասնատավար մանր տնտեսությունների ապրանքային ավելցուկները տալու հնարավորությունները չափազանց սահմանափակ են, և յերկորդը մանր անհատավար տնտեսություններն այն բազան են, վորից ծնվում ե կապիտալիզմը՝ «Միօտ, ամեն որ, ամեն ժամ, տարեային կերպով լին մասայական մասաւարով»(Լենին): Այդ կլիններ և կար առեւտուըլլ սոցիալիստական արդյունաբերության և մանր բուրժուատական գյուղացիության միջն, բայց վոչ խորհրդային առևտուըլլ: Այդ առեւտուըլլ կողններ (և ոգնում եր) վոչ միայն սոցիալիստական սեկտորի աճին, այլև, վորոշ չափով, կապիտալիստական ելեմնտների աճին: Այդ առեւտուըլլ հարկավոր եր նեպի առաջին շրջանին և անպետք ե, յերբ կուսակցությունը բաց ճակատով արշավ սկսեց կապիտալիստական տարրերի զեմ: Յեկա առավել, այդ առեւտուըլլ անտեղի յեւ սոցիալիզմի հարձակողանի ժամանակ՝ բոլոր ճակատներում:

Ուրեմն, խորհրդային կոլտնտեսային առեւտրի ծավալման համար, միայն ներկա ետապում են ստեղծվել հարկավոր պայմանները: Այդ պայմաններից մեկն ել այն ե արդեն, վոր կոլտնտեսային գյուղատնտեսությունը, —վորը զինվում ե կատարելազորձված տեխնիկայով և վերածվում ե խոշոր, մեքենայական բազայի վրա հիմնվող տնտեսություն, —արդեն ունի հնարավորություն (և տարեց տարի այդ հնարավորություններն աճելու յեն) չտեսնված, և անհատավար տնտեսությունների համար անմատչելի չափերով ավելցուկնել իր արտադրության ապրանքային մասը:

Այն չափով, ինչ չափով վոր կոլտնտեսություններն ուժեղանան կազմակերպչապես և տնտեսապես այն չափով վոր արագանա կոլտնտեսությունների մեքենայացման ու նոր կատարելազորձված մեքենաներով զինվելու պրոցեսը և, վորպես այդ պրոցեսի հետեւ վանք, ավելանա կոլտնտեսությունների արտադրանքի ապրանքային մասը, այդ չափով ել կծագալվի կոլտնտեսականների առեւտուըլլ:

Հարց ե ծագում. վերացվում ե արդյոք պլանային հացամթերւան անհրաժեշտությունը:

Վէճ, չի վերացվում: Հարկադրել կոլտնտեսային առևտրի ծավալումը հացամթերման չի կարելի, վորովհետև հացամթերման պլանը յերկրի տնտեսությունը պլանային կերպով վարելու անհրաժեշտ և պատասխանատու միջոցն ե կազմում:

Հացամթերման պլանը շաղկապված ե մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր պլանին և պետք ե անցկացվի անխախտորեն:

Հացամթերմը հանդիսանում ե կոլտնտեսականին վերադաստիրակելու, նրա մեջ մնացած մանր բուրժուական և նույնիսկ կուլակային տրամադրություններն ու սովորությունները վերացնելու, նրան սոցիալիստական աշխատավորի վերածելու միջոց: Հացամթերումները կատարելով միայն կոլտնտեսականների մեջ խորանում ե կոլտնտեսականների և պրոլետարական պետության շահերի նույնության դիտակցությունը:

Դասակարգային թշնամին - կուլակը և նրա ազենտուրան - զանազան տեսակի ոպորտունիստները փորձում են հակադրել հացամթերումը, կոլտնտեսային առևտրի ծավալելուն: Նրանք արթնացնում են կոլտնտեսականների անգիտակից մասի մեջ մանր-բուրժուական բնապահները և դրդում վոր կոլտնտեսականները նախ մտածեն նրանց շուկայում ծախելու մասին և հետո միայն հացամթերման պլանը կատարելու մասին:

Այդ տեսակ տրամադրությունների դեմ հարկավոր ե պայքարել անխակերպով:

Զգետք ե սոսանալ վոր հացամթերման պլանի կատարելը կոլտնտեսականների առաջին պարտականությունն ե: Այդ պլանն ավարտելուց հետո, այսինքն՝ 1933 թվի հունվարի 15-ից հետո միայն կարելի յե ձեռնարկել հաջի կոլտնտեսային առևտրի ծավալման: Անհրաժեշտ ե հասկանալ, վոր հացամթերման մեթոդը կուղավորվում ե կոլտնտեսային առևտրի ծավալման մեթոդի հետ:

1932 թվի հացամթերման պլանը կրճատված ե, նույնպես անառնապահական մթերքների պլանը: Կուղակցությունն ու պրոլետարական պետությունը այդ վորոշումով հեշտացնում են կոլտնտեսությունների համար հացամթերման պլանի կատարումը և նախատվալիներ են պատրաստում կոլտնտեսային առևտրի զարգացման համար:

Չհակադրել կենտրոնացրած մթերումները կոլտնտեսային առևտրին, հասկանալ և բացատրել ուղիշներին, վոր մեկը լրացնում ե մյուսին, — ահա թե ինչ ե պահանջվում:

## ԼԻՌՎԻՆ ՈԳՏԱԳՈՐԾԵՆՔ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք տեսանք, վոր խորհրդային, կոլտնտեսային առևտրի ծավալման համար կան բոլոր հնարավորությունները: Բայց խորհրդային առևտրի ծավալման համար բավական չե միայն հնարավորությունների գոյությունը, հարկավոր ե եներգիա, հարկավոր ե յեռուն աշխատանք՝ այդ հնարավորություններն իրականություն դարձնելու համար:

Ինչ խնդիրներ են դնում կուսակցական և ղետության վորոշումները՝ կուսակցականների վարչությունների, առանձին կոլտնտեսականների և անհատավար գյուղացիների առաջ:

Բոլցիկյան ցանքը հաղթությամբ ավարտվելը, բերքահավաքը ժամկետին և առանց կորուստների կատարելը: Անցյալ տարվա փորձերն առում են, վոր այստեղ, բերքահավաքի կազմակերպման զործում թագնված են չափաղանց մեծ հնարավորություններ՝ կոլտնտեսային առևտրի ծավալման տեսակեալից: Հայտնի յե, թե ինչքան մեծ են յեղել բերքահավաքի կորուստներն այն կոլտնտեսություններում, վորտեղ աշխատանքները լավ կազմակերպված չեն յեղել:

Հարյուրավոր ու հազարավոր ցենտներ հաց, արեածաղիկ և ուրիշ թանգարժեք մշակություններ են վոչչնչացել, թափթփվելու կորել աշխատանքների ուշ կազմակերպման, ղիմաղրկության, հավասարեցման և ուրիշ բացերի պատճառով:

Այս տարի մենք ամեն կերպ պիտի աշխատենք վերացնել այդ բացերը, աչքի առաջ ունենալով, վոր միայն այդ բացերի վերացումը կարող ե տալ կոլտնտեսային առևտրի ծավալման համար զգալի չափերով հավելյալ հաց և ուրիշ մշակույթներ: Կոլտնտեսությունների վարչությունները և ամբողջ ակտիվը կարող են և պիտի ձեռնարկեն կոլտնտեսություններում նոր ճյուղեր կազմակերպելուն: Կոլտնտեսային առևտրի ծավալումը մեծ ստիմուլ ե տալիս զարգացնելու տնտեսության այնպիսի ճյուղերը, վորոնք մինչեւ հիմա աչքաթող են յեղել: Այդ ճյուղերին են պատկանում՝ մանր անամսնարուծությունը, խոզաբուծությունը, ճագարաբուծությունը, ձուկի տնտեսություններ կազմակերպելը, մեղվաբուծությունը, այդերուծությունը, բանջարանոցների զարդացումը և այլն: Ամեն մի կոլտնտեսության ակտիվի նախաձեռնությունը, ամեն մի նոր առաջարկ այդ ճյուղերի կազմակերպման կամ բարեկավման մասին հարկավոր ե վողջունել և խոր ուշադրությամբ քննարկել: Փետք ե հիշել, վոր այդ ճյուղերի կազմակերպման և զարգացման ուղիղ աշխատանքը ահապին քանակությամբ ապրանքներ կտա կոլտնտեսային առևտրի ծավալման համար:

Առանձին կոլտնտեսականներ նմանապես կարող են և պետք ե վոր սկսեն իրենց չհամայնացրած տնտեսություններում կազմա-

կերպել հիշյալ ճյուղերի ապրանքների արտադրումը։ Գյուղի կուսակցական, խորհրդային և կոմիերիտական կազմակերպությունները պիտի ոգնեն առանձին կոլտնտեսականներին այդ ճյուղերի կազմակերպման և զարգացման գործում։ Դատավարտելի սխալ և այս գործում վորեն սահմանափակումն ու արգելը։

Յեվ, վերջապես, պետք չի մուսանալ նաև անհատավար սեկտորը և ոգնել անհատավարներին իրենց տնտեսության ապրանքային մասը բարձրացնելուն այն սահմանափակ շրջանակներում, վորը կապված և անհատավար մանր տնտեսության հետ։

Առանձին կոլտնտեսությունների և անհատավար տնտեսություններում ապրանքային մասի բարձրացնելը շատ տեղերում թերապահանատվում է։ Կարծիքներ կան, թե «ինչ կարիք կա մտածել դրանց մասին, քանի վոր այսոր կամ վաղը, թե անհատավար տնտեսությունները, թե կոլտնտեսականների չհամաձայնացած տնտեսությունը լուծվելու յեն խոշոր կոլտնտեսային՝ սոցիալիստական տնտեսության մեջ»։ Անկասկած, կոլտնտշինարարության զարգացումը, նրա աստիճանաբար ամրանալն ու ավելի բարձր աստիճանի բարձրանալը պայմանավորում է անհատավար և չհամաձայնացած տնտեսությունների լուծումը, սակայն կոլտնտշինարարության նիրկա հետապի-նրա արտելային ձեր ետապի-ժամանակ (վորը դեռ մնում է կոլտնտշինարարության գլխավոր ձեւը), աններելի սխալ և մոռացության հանձնել թե անհատավար տնտեսությունները, թե կոլտնտեսականների չհամաձայնացրած տնտեսությունները կապակցելով նրանց խորհրդային առևտրի ծավալը մասին հետ։

Կարող են ծագել և այսպիսի մտքեր։ Զի՞ վտանգի արդյոք անհատավարի և կոլտնտեսականների չհամաձայնացրած տնտեսությունների զարգացումը կոլտնտեսային շինարարությանը։ Զի՞ կարող պատահել վոր կոլտնտեսային առևտրի ծավալման շնորհիվ, անհատավարները և նույնիսկ կոլտնտեսականները գերադասեն իրենց սանր, չհամաձայնացրած տնտեսությունների շահերը կոլտնտեսության շահերին։

Այս հարցերին մենք կարող ենք տալ, առանց տասանվելու, բացասական պատասխան։ Վոչ, անհատական և կոլտնտեսականների չհամաձայնացրած տնտեսությունները վոչ մի չափով չեն կարող վըտանգել կոլտնշինարարությունը, մանր տնտեսությունը յերեք չի կարող գերադասելի լինել խոշոր, մեքենայական տեխնիկայի վրա հիմնված տնտեսությունից։ Այդպիսի հարցեր զնելն անդամ անտեղի յե, վորովետև ԽՍՀՄ-ի գյուղացիության մեծամասնությունը, իսկ Հյուսիսային կովկասի գյուղացության ճնշող մեծամասնությունը արդեն իրենց համար վերջնականապես լուծել են այդ հարցերը։ Այդ-

պիսի հարցեր գնելը կնշանակեր վերագառնալ աջ ովորտունիստների արգելու ջրված, կյանքի փորձով (և վոչ միայն տեսականապես) հերքված տեսությանը, թե գյուղացին կոլտնտեսություն չի գնա, վորովհետեւ մանր տնտեսություններն ավելի ձեռնառ յեն և ուրիշ նման ցնդաբանություններ։

Ուրեմն կոլտնտեսություններուն յեղած բոլոր հնարավորությունների մորթիզացիայի հետ զուգնթաց, կարելի յե և հարկավոր և համարձակորեն ձեւնարկել և կոլտնտեսականների չհամայնացրած ու անհատավար տնտեսությունների մեջ յեղած բոլոր հնարավորությունների մորթիզացիային այդ հնարավորությունները իրականություններու, կոլտնտեսային առևտրի ծավալումն ապահովելու համար։

Բայց խորհրդային, կոլտնտեսային առևտրի ծավալումը պահանջում է, վորպեսզի կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատավարների ապրանքը հոսանքը հանդիպի քաղաքի արդյունաբերության և տնայնագործության ապրանքների հանդիպական հոսանքներին։ Կոլտնտեսային առևտրությը չի կարող ծավալվել ու զարգանալ ապրանքների միակողմանի հոսանքի ուժեղացցմամբ։

Հարց կարող է ծագել, կարող են արդյոք մեր սոցիալիստական արդյունաբերությունն ու կազմակերպված տնայնագործությունը բավարարել կոլտնտեսային առևտրի ծավալմամբ առաջացած պահանջներին, կարմիր են տալ ապրանքների հանդիպական հոսանքը։ Այս հարցի պատասխանը նմանապես կախված է մեր եներգիայից և աշտանքը կազմակերպելու ընդունակությունից։ Անկասկած ե, վոր մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ կան հնարավորությունների անսպառ ազրյուրներ։ Փայտի, յերկաթի, կաշվի և ուրիշ հումուրներ, վորոնք մինչև որս դեն եյին ածվում և չեյին ոգտագործվում վոչ արդյունաբերության մեջ, վոչ ել տնայնագործական արտելների և նրանց միությունների կողմից և վորոնք կարող են տալ և արդեն սկսել են տալ ահազին գումարների հասնող լայն սպառման ապրանքներ։

Բավական է այստեղ մեջ բերել մի քանի փաստեր, վարպեսպարզ լինի, թե ինչքան հարուստ են այստեղ մեր հնարավորությունները։

Վ. Մալը յերկրային «Մոլոտ» թերթում գրում է, վոր «Կարմիր Ակադեմյա» գործարանի պիկերների ցեխը կազմակերպվել և մոտ մի տարի տուած։ Առաջին իսկ աշխատանքային որից սկսած, սկսում են հավաքել ցեխում ցեխնով ծածկված յերկաթի դեն ձգած կտորները, և յերկաթի կտորները հնագույն մեքենաների ցեխում։ Գերանդիների ցեխում մնում են թանգարներ արտասահմանյան պողպատի կտորներ։ Այնտեղ ոգտագործվում են միայն այն կտորները, վորոնք 30 աս-

տիմետրից յերկար են: Ամեն մի ցեխում կան անպետք կտորներ, անպետքած մետաղներ, խոտան նյութեր, յերկաթի տաշեղներ և այլն... կան փայտեղների ահազին մնացորդներ, վորոնց թվում՝ 50 տոկոս 2—2<sup>1/2</sup> մետր յերկարության ձողեր (ռեյլաներ)...: Ամեն մի գործարանից բաց թողնված մեքենաներից մնում են մնացորդները:

Ի՞նչպես են ոգտագործվում գործարանում այդ մնացորդները: Ամենաբարբարոսական կերպով: Փայտեղների մնացորդները վառում են, և ավելքում ծախվում են կամ փողոց են նետվում... ժանդուռում, վչանում են այսպիսի թանգարժեք մեռադները, վորոնցից կարելի յե շինել գդալներ, ափսեներ, կողպեքներ, լամպաներ... մի խոսքով ողտագործել նրանց:

Գործարանում այդ մնացորդների ոգտագործումը—մոռացված ճակատամաս ե: Հկ (բ)կ կենտկոմի և Ծանր արդյունաբերության ժողկոմատի վերջին վորոշումները մնացորդների ոգտագործման մասին և «Պրավդայի» մի շարք հոդվածներ—գործարանի ղեկավարներին տեղերից դեռևս չեն շարժել: «Զնշին գործ ե, չարժե տնայնագործությամբ զբաղվել», մտածում են նրանք: «Կարմիր Ակսայի» բանվորները կոլտնտեսականներին պետք ե տան լայն սպառման առարկաներ, իրենց գործարաններում արտադրելով այդ առարկաները և հարվածայնորեն իրագործելով պետության վորոշումը՝ ծանր արդյունաբերության մեջ 500 միլ. ոռութիւն լայն սպառման ապրանքներ արտադրելով: Դրա համար նրանք ունեն բոլոր հնարավորությունները»:

Նույն լրագրում Զուխիչինը գրում ե, վոր № 5 կաշվեգործարանի ուտիլի ցեխը կաօվի մնացորդներից կարում է չուտաեր՝ 600 զույգ ուրեկան, ձեռնոցներ՝ 500 զույգ, սպորտամեններ 200 զույգ և այլն:

Մեխենը զրում ե, վոր Վորոշիլովի անվան գործարանը կարող է փայտեղների մնացորդներից պատրաստել աթոռներ և ուրիշ կահարացիք:

Լ. Պոլյանսկայան գրում ե, վոր «Սելմաշ» գործարանի վաճառման բաժինը ծախում ե ամսական 100 տոնն մետաղի մնացորդներ. փայտի մշակման ցեխը կարող ե իր մնացորդներից պատրաստել սեղաններ, աթոռներ և այլն:

Ա. Պ—ն գրում ե, վոր Յերկլային կարի Փաբրիկների մնացորդներից—840.000 մետրից ոգտագործվում ե առամմ միայն 215,454 մետրը, կամ 26 տոկոսը:

Նման փաստերի ցուցակը կարելի յե յերկարացնել անվերջ. բայց սրանք ել բավական են յեղբականացնելու, վոր, իսկապես, մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ կան անսպառ աղբյուրներ, կոլտնտեսականների ապրանքների հոսանքի ղեմ դիմավորող ապրանքների հոսանքը կազմակերպելու համար: Հարցը կայանում է

նրանում, վորպեսզի գործարանների յեռանկյունները—կուսակցական արհմիութենական կազմակերպություններն ու՝ վարչությունը զբաղվեն գործարաններում անուշաղության հետևանքով աղբակույտերի վերածված մնացորդներն ոգտագործելով և նրանցից լայն սպառման ապրանքներ արտադրելով:

Պրոլետարական պետությունն արդեն հրահանգել ե այդ ուղղությամբ: Միայն ծանր արդյունաբերության գծով 500 միլիոն ոուրլու ապրանքներ պետք ե արտադրվեն այդ հրահանգի համաձայն: Կասկածից դուրս ե, վոր յեթե գործարանների յեռանկյուններն ու բանվորական ակտիվը լծվեն հրահանգի իրագործմանը—վոչ միայն կարելի յե կատարել, այլ և գերակատարել այդ հրահանգը:

Ինչպես տեսնում ենք, թե գյուղատնտեսությունը և թե արդյունաբերությունը ունեն ապրանքներ ավելացնելու, նոր ապրանքային հոսանքներ ստեղծելու լայն հնարավորություններ, վորոնց իրագործելը կախված ե ինց իրենց—կոլտնտեսականների և բանվորների աշխատանքի աշխատությունից:

Սակայն խորհրդային, կոլտնտեսային առևտրի ծավալման համար բավական չե ապրանքների գոյությունը: Հարկավոր ե կազմակերպել ապրանքների ըջանառությունը: Մենք հիմա արդեն ունենք ապրանքներ, բայց զեռ չենք կարողանում այդ ապրանքներն սպառողներին հասցնել: Շուկաների, խանութների, կրպակների կազմակերպություն ու բացումը, շուկա յեկած կոլտնտեսականների համար հարմարություն ունեն կոլտնտեսային առևտրի ծավալման տեսակետից:

Զափազանց մեծ նշանակություն ունեն նաև այն, թե ինչպես ե կանոնավորվելու կոլտնտեսային առևտրի մեջ գների խնդիրը: Տեսնենք թե ինչպես ե ծավալվում խորհրդային առևտուրը Հյուսիսային Կովկասի շուկաներում: Մայիսի սկիզբներից, այսինքն կենտկոմի և ժողկոմի վորոշումների հրատարակման որերից անցել ե արդեն բավական յերկար ժամանակ:

Այդ ժամանակամիջոցում աեղի ունեցած փաստերը գալիս են ապացուցելու, վիր՝ 1. Մեր գյուղերում կան ապրանքային ավելցուկներ, վորոնք կարող են կաշալի չափերով բարելավել կոլտնտեսականների սպառողական պահանջներին:

2. Մեր առևտրով դրազվող սրգանները—գլխավորապես կոոպերացիան—ունեն բավականին խոշոր ապրանքային պահանտներ, վորոնք կարող են կաշալի չափերով բարելավել կոլտնտեսականների սպառողական պահանջներին:

3. Ապառողական կոպերի ապառողական պահանջները, գուկաների վարչությունները, քաղխորհուրդները և ուրիշ

Կազմակերպությունները շատ դանգաղ են կատարում պետական վո-  
լուումների պահանջները, իսկ տեղատեղ խեղաթյուրում են այդ վո-  
րոշումները:

4. Գների հարցում, հակառակ պետական կարգադրություններին, ըստ վորի կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և անհատավար դյուլացիները իրենց ապրանքները ծախում են շուկայում դասավոր-  
վող գներով, տեղի յեն ունենում գների վարչական կարգով նշանա-  
կելու փաստերը:

5. Մոռացության են համանվում պետական վորոշումները՝ կոլ-  
տնտեսությունների, կոլտնտեսականների և անհատավար դյուլացիների  
առևտուրը հարկադրելու պայմանների մասին և տեղատեղ, հակառակ  
այդ վորոշումներին, արգելվներ են ստեղծում կոլտնտեսային առևտուրի  
ժավամանը ֆինորդանների կողմից:

Բերենք փասեր:

«Մոլոտ» թերթի տված տեղեկությունների համաձայն, «Զա միլ-  
նիյ տրուդ» կոլտնտեսային վարչությունը Սելմաշի բանվորներին ծա-  
խելու համար ծրագրում է արտադրել 142,200 ոռուրու միս, կաթնա-  
մթերքներ, մեղր և ուրիշ դյուլատեսական ապրանքներ:

Եսենտուկի, Բորգուստանի նովա. Բալագողարնա և Ետոկայի յուրաժի  
կոլտնտեսականները գտնում են, վոր այդ յուրաժի կոլտնտեսականները  
կարող են թոշունների քանակը հասցնել 17,000-ից մինչև 40,000-ի,  
ճագաբների թիվը հասցնել մինչև 30,000-ի:

Վերին — Դունի ուայոնում տեղական մթերումներ կատարող «Ար-  
տեմ» շախտի փակ բանկոպար կնքել է 50 ցենտներ յուղ գնելու պայ-  
մանագիր:

Կաբարդինա. Բալկարիայի ինքնավար մարզը, ըստ մոտավոր  
հաշվի, կարող է խորհրդացին շուկա հանել բացի կոնտրակտացիա-  
յից՝ 22,000 ցենտներ կաթ, 300 ցենտներ խոզի միս, 200 ցենտներ  
մեղր, 1200 տոնն զանազան բանջարեղեններ, 1500 տոնն ձմերուկ և  
սեխ, 35 տոնն խնձոր և տանձ, 40 տոնն խաղող:

Մյամնիկյան ուայոնի կոլտնտեսությունները Սելմաշի բանվոր-  
ներին ծախսել են 120 սայլ մթերքներ, Բերենք եյին՝ 35 զլուխ խոշոր  
անասուն, 10 վոչխար, կաթ, պանիր, ձու, կարտոֆիլ և այլն:

Պավլովսկում կազմակերպվել եր ուայոնական կոլտնտեսային տո-  
նավաճառ, վորի շրջանառությունը կազմել է կոլտնտեսականների  
համար 100 հազար ոռուրի, կոլտնտեսականների և անհատավորների  
համար՝ 200 հազար ոռուրի:

Այդ տոնավաճառին մասնակցել եյին Խոստովի հետեւալ գործա-  
րաններն ու Փարբիկները — Դ.Պ.Ծ.Դ, «Ժեստ. Վեստենինը», Զենցովի ան-  
վան գործարանը, Կալինինի անվան տպարանը և Պավլովսկայա ուայոնի

սպառողական կոռպերացիան, Ռոստովի ՓԲԿ-ները վաճառեցին 55 հա-  
զար ոռուրու ապրանք: Պավլովսկու կոռպերիացիան՝ 20 հազարի, գրքեր  
ծախսեցին 1000 ոռուրու:

Տագանրովի առաջին մասսայական կոլտնտեսային շուկան,  
վորը կազմակերպվել եր հունիսի 12-ին, տվեց յետելարդունքները,  
կոլտնտեսականներն այդ որը ծախսեցին Տագանրովի բանվորներին  
3320 կիլո սիս, 7488 լիտր կաթ, 1710 կիլո մեղր, 605 կիլո կարագ,  
յուղ, 300 կիլո պանիր, 700 կիլո սեր, և բացի դրանից, շատ ուրիշ  
բանջարեղեններն և մրգեր:

Քաղաքի վաճառող որգաններն այդ որը կոլտնտեսականներին և  
անհատավարներին ծախսեցին մոտ 100 հազար ոռուրու արդյունարե-  
բական ապրանքներ:

Ոստարգինի բազաներից մեկում դժոնվում են այնպիսի ապ-  
րանքներ, ինչպես են՝ 214 արկղ լուցկի (պահված են յեղել 6 ամիս),  
շորեր ներկելու ներկեր 38 արկղ (պահված են յեղել յերկու տարի),  
կակառ 2 արկղ (պահված են յեղել 3 ամիս), աղ 25 տանն (պահ-  
ված են յեղել դեռ անցյալ տարվանից):

Կաշու Միությունում պահվել են առանց շրջանառության՝ 110  
խածութ, 9 արկղ պայուսակներ, 40 արկղ պատրաստի կոշիկներ 40  
հազար ոռուրու, 5 արկղ կոշիկ մաքրելու յուղ: ԳՈՐԾ-ի պահեստում  
մնացել են պահված մարտի վերջերին ստացված պատրաստի հագուստ-  
ներ — 300 հազար ոռուրու, և անցյալ տարվանից — զալանտերիա՝ նույն  
պես 300 ոռուրու:

Ոսեթիայի և Ինգուշեթիայի տնայնագործերի Միությունները տա-  
լիս են 14 միլիոն ոռուրու լայն սպառման ապրանքներ 1932 թիվին:  
«Մոլոտ» խմբագրական հոդվածում ասված ե, վոր Սելմաշավարի  
պահեստներում պահվել են առանց շրջանառության լայն սպառման  
ապրանքներ 900,000 ոռուրու:

Այս թվերն ու փաստերը հաստատում են, վոր ապրանքներ կան,  
բայց շրջանառության կազմակերպումը դեռ թույլ ե:

Հետեւյալ փաստերը վերաբերվում են կոլտնտեսային առևտուրի ծա-  
վալման դեմ ստեղծվող խոչնոտներին:

Յերկու ուայոնի կոլտնտեսության ու Խայսնաբ «Պյատիկետկա»  
կոլտնտեսության կըպակը գարձրել են փակ բաժանորդական կետ և  
հրահանգ են տվել՝ ազատ առևտուր չկատարել:

Չերկեսիայի կոլտնտեսությունների մարզային Միությունը՝ 2  
խանութ և 2 կըպակ բանալու տեղ, բացել ե միայն 3 կըպակ:

Հյուսիսի. Կովկասի յերկաթուղարքի առանձին գործականները խոչնու-  
գոտներ են զնում կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և ան-  
հատավարների ապրանքները լնդունելիս և դուրս տալիս կան դեպքեր,

յերբ կրկնակի վարձ են վերցնում այդ ապրանքներից տեղափոխման համար:

Պավլովկում կայացած տոնավաճառում մասնակցելուց հրաժարվել են, որինակ՝ Խորպիսբիտը, Սեվկավմնաբարբիտը և ուրիշները:

Տուափսեյի խորհրդային շուկայում փորձեր են յեղել կոլտնտեսականին իր մթերքներով ձերբակալելու:

Ռոստովի Նովոպսիլենսկի շուկայում, վորը գվազորապես սպասարկում ե Լենգործարանի, Միկոյանի անվան ֆարբեկի և ուրիշ խոշոր գործարանների բանվորներին, շուկայի վարչությունը վոչ մի տարբերություն չի դնում կոլտնտեսայինի և սպեկուլյանտի միջև։ Միանվագ տուրքը—20 կուպեկ, հավաքում են բոլորից անխտիր։ Սպեկուլյանտների գեւ պայքար չի մղված։ Կոլտնտեսականներից՝ կշեռքից ոգտվելու համար պահանջում են 3 բուրլի։

Քիչ չեն նաև վարչական ձեռվ գներ նշանակելու փաստերը։

Պարզ ե, վոր այդ տեսակի վերաբերմունքը չի կարող արագացնել կոլտնտեսային առևտրի ծավալման գործը։

## ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՊԱՅՖԱՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՌԵՎՏՏԻ ՄԱՎԱ- ՍԱՆ ՀԱՄԱՐ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՈՒՄ ՅԵՎՈ

Ինչպես տեսանք, խորհրդային կոլտնտեսային առևտրի ծավալման համար բոլոր պայմաններն ստեղծվել են։ Տիսանք նմանապես, վոր կոլտնտեսային առևտրի ծավալմամբ զգալիորեն կարելի յե բարեկավել կոլտնտեսականների կազմակերպչական-տնտեսական դրությունը և բանվորների պարենավորման խնդիրները։ Կոլտնտեսային առևտրի ծավալման պրակտիկային առյօրես ծանոթությունը պարզեց, վոր մեր յերկրամասում գեռ ամեն տեղ լավ չեն ըմբռնել այդ հարցի կարևորությունը և գեռ չեն կարողացել այնպես մոտենալ խնդրին, վորպեսզի կոլտնտեսային առևտուրը ծավալվի ուղիղ հիմքերով և տա ցանկալի արդյունքներ։

Կոլտնտեսային առևտրի ծավալման խնդրում կարող են տեղի ունենալ (և արդեն ունեցել են տեղ-տեղ) և աջ և «ձախ» խեղաթյուրումներ, կուսակցական գծի խախտումներ։

Այստեղ ամենամեծ վատանգը—դա կենտրոնացրած պլանային մթերումների հակադրումն է կոլտնտեսային առևտրի զարդացմանը։

Կուլակային ելեմենտները, նրանց ամեն տեսակի արբանյակներն ու կամակատարները արդեն տարածում են լուրեր, թե խորհրդային իշխանությունը թույլացրել ե հացի, անասնապահական մթերքների և այլն ազատ առևտուր, այնպես, վոր հացամթերքման պլանի կատարելն այլիս պարտադիր չե։

Կուսկազմակերպությունների աշխատանքի հիմքը կազմելու յե այդ և նման պրովակացին լուրերի դեմ պայքարելը, լայն բացարական աշխատանք տանհերով կուսակցության և պետության վորոշումների շարքը «... Նախատակահարմար համարել հացամթերումների՝ ներկապանը և սերմային ֆոնդերի պատրաստումն ավարտելուց հետո, այսինքն 1933 թվի հունվարի 15-ից սկսած, կոլտնտեսություններին ու կոլտնտեսականներին լիակատար հնարավորություն տալ անարգել վաճառելու իրենց ավելի հացն ըստ իրենց հայեցողության...», այսպես և զնում հարցը կուսկենտեկումի և ժողկոմխորհի վորոշումը՝ 1932 թվի հացամթերքման պլանի և կոլտնտեսային հացի առևտրի մասին։ Ուրիշ կերպ գնել հարցը չի յել կարելի։

«Կոլտնտեսային առևտրի ծավալման պարտադիր պայմանն ե հանդիսանալու կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատավարների կողմից, կենտրոնացրած պահանջին մթերման առաջադրությունների խսկությամբ կատարելը։ Կոնտրակտացիայի պայմանագրերը պետք ե նկատվեն, վորպես հաստատ պարտավորություն պետության հանդեպ, վորը հարկավոր ե կատարել առանց առարկությունների և առաջին հերթին։» (ՀԿ(Բ)կ Ցերկրային կոմիտեի պլենումի բանաձեկից)։

Այսպես, ուրեմն, ամենից առաջ հարկավոր ե կազմակերպել կենտրոնացրած պլանային մթերումների իր սկանացումը, վորը «կոլտնտեսային առևտրի ծավալման պարտադիր պայմանն ե»։

Մենք իրավունք չունենք մոռանալու, վոր «Սոցիալիստական շինարարության ներկա հետապի համար բնորոշ կինի պետական մթերումների (վորոնց պլանները 1932 թվի համար զգալիորեն կրճատված են անցյալ աարվագ դիմաց) մեթոդի գորգավորումը կոլտնտեսային առևտրի հետ» (բոլցիկի, № 10 1932 թ. յեր 3):

Կոլտնտեսային առևտրի թափերի ծավալման խնդիրներում ևս կարող են, և արդեն նկատվել են կուլակային պլովակացիոն լուրեր։

«Զպետք ե շուկա զնալ, յեթե վոչ առևտրի ծավալման կարգով կհայտնաբերեն թե ով-ինչով ե վաճառում, վորպեսզի հետո հարկադրին և կոլտնտեսությունից հեռացնեն» (Տիմոշվակիյ ուայոն) «բոլցիկի» № 10, 1932 թիվ, յերես 7):

Այս և նման կուլակային յելությունները այնի բանի հետևանքն են, վոր կուսակցության և կառավարության վորոշումների մասսայականացնելու խնդրին շատ տեղերում մոտենում են ոպորտունիստական գանդաղկոտությամբ։ Որինակ. Հունիսի 4-ին Ռուսակի Նովոպասիլենսկու շուկայում Թոփթի գյուղի (Մյասնիկյան ուայոն) անհատավար Տիրացույանը ասել ե՝ «Յես չգիտեմ այդ վորոշումների մասին (խոսքը կուսկատեսային առևտրի մասին ե. Մ. Դ.): Ցերեն յես գիտենայի, յես շատ մթերքներ կերպեցի, թե չե վախենում եմ, վոր ինձ վրա հարկ կդնեն» (Մոլոտ № 3281 հունիս 4 1932 թիվ)։

Կուսակցական կազմակերպությունները չեն շատալում վորոշումների մասսայականացմամբ. լինում են գեղքեր, յերբ իրենք, կուսակադամակերպությունները լավ չեն ուսումնասիրում այդ վորոշումները, հետեանքը, լինում ե այն՝ վոր կուլակային ագխտացիան, նրանց պրովակացիոն յելույթները մնում են առանց մերկացման և վնասում են կոլտնտեսային առետրի զարգացմանը:

Կան և այսպիս կարծողներ. «Կուսակցությունն իրավունք և տվել ազատ առետրի: Մենք այստեղ անելիք չունենք: Մեր գործը պլանային մթերումն ե: Իսկ առետուրը կդնա ինքնահոսի կարգով: Մենք հնարավորություններ չունենք կանոնավորելու առետուրը»: Այսպիս կարծողները անշուշտ նահանջում են կուսակցության վերջին վորոշմներից, յենելով այդ ոպրտունիստական տեսակետից. այդպիս կարծողները, իսեթ աչքով են նայում շուկաների կազմակերպման և սպասարկման խնդիրներին, խանութներ և կրթակներ հատկացնում կոլտնտեսություններից և կոլտնտմիություններին շուկաներում չեն կազմակերպում թիւանոցներ, ոթեաններ և այլն: Հրաժարվում են (կամ ձգձգում են) լայն սպասման ապրանքների արտադրությունից, չեն մասնակցում իրենց ապրանքներով կոլտնտեսային շուկաներին և տոնավաճառներին:

Այս և նման տեսակի աջ ոպրտունիստական պրակտիկայի օրինակների հետ մենք արդեն ծանոթացանք: Մրանք կուլակային աղդեցության յենթարկվելու նշաններն են և պահանջում են անխնապայքար նրանց դեմ:

Կոլտնտեսային առետրի ծավալումը չի կարող մնալ կուսակցական ազդեցության շրջանակից դուրս: Ինքնահոսն այստեղ նույնպիս վտանգավոր ե, ինչպիս նա վտանգավոր և վնասակար և ուրիշ ասպարեզներում: Ինքնահոսի տեսությունն այս խնդրում մոռացության և հանձնում այն անենքելի փաստը, վոր խորհրդային պայմաններում առետուրը, ինչպիս տեսանք, կրում ե բոլորովին ուրիշ բնույթ: Նրանք մոռանում են, վոր ինքնահոսի հետեանքներից մեկն ու կարերը կարող ե լինել միջնորդ—սպեկուլյանտի խցկվելը կոլտնտեսային առետրի մեջ: Մինչեռ հարկավոր ե «...միջոցներ ձեռք առնել արժատախիլ անելու միջնորդ—սպեկուլյանտներին, վորոնք փորձում են շահադրծել կոլտնտեսային առետուրը» (կուսկենակոսի և ժողկոմխորհի վորոշումից): Բայց միջնորդ—սպեկուլյանտների կոլտնտեսային առետրի մեջ խցկվելը նշանակում ե զների վեր ցատկելը, «զների աղատ խաղը», կարող ենք արդյոք թույլ տալ այդպիսի դրություն կոլտնտեսային առետրի բնագավառում: Անկասկած վոչ: Մենք չենք կարող թույլ տալ «զների աղատ խաղը», չենք կարող հրաժարվել կոլտնտեսային առետրի կանոնավորման խնդիրներից այն պարզ պատճառով, վոր այդ

կնշանակեր հրաժարվել բանվորական դիկտատուրայի նոր տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքից:

«Նեար բարորդին չի նաև ականական առեւտրություն, գերերի ազատ խականական առեւտրություն: Նեար—առեւտրի ազատություն ե վորոշականական վարչություն, վորոշ օրգանական վարչություն, պետության կանոնավորող դերի յեւ երա դերը ուղարկում ապահովելու պայմանություն: Մրանում ե կայանում նեարի յերկարագ կողմը: Ընդ ոմին, նեարի այս կողմը վոչ պակաս, յերեւ վոչ ավելի, կարեվոր ե քան երա առաջին կողմը:

Քանի դեռ կա նեար, պետք ե պահպանվեն երա յերկու կողմն ել, յեվ առաջին կողմը, վորը ուղղաձիգ ե ուղամական կոմունիզմի ընթիւմի դեմ յեվ նպատակ ունի ապահովելու առեւտրի վարության յեվ յերկորդ կողմը, վորն ուղղաձիգ ե առեւտրի լիակատար ազատության դեմ յեվ նպատակ ունի ապահովելու պետության կանոնավորող դերը ուղարկում: Վոչնչացրեմ այդ յերկու կողմերից մեկն ու մեկը,—յեվ դու նեար նեար» (ՍՅԱԼԻՆ):

Խորհրդային և կոլտնտեսային առետրի ծավալման խնդրում բանվորական պետության կանոնավորող դերը պիտի կայանա նրանում, վոր կառավարությունը, մի կողմից մտնտեսական միջոցների աղդեցությամբ (կոռպերացիայի և պետական առեւտրական ձերնարկների միջոցով), շուկայում առետուրը պիտի կանոնավորի և աղդի գների իջեցման վրա: Մյուս կողմից կազմակերպչական միջոցառումներով—կոլտնտեսականներին և անհատավարներին կազմակերպելով, նրանց շուկադուրս գալը կանոնավորելով, արմատախիլ պիտի անի միջնորդ—սպեկուլյաններին, գործադրելով նրանց դեմ խիստ վարչական միջոցներ:

Այստեղ հարկավոր ե չմոռանած վոր միջնորդ—սպեկուլյաններին արմատախիլ անելը հեշտ չե և միայն վարչական միջոցները բավական չեն: Միջնորդ—սպեկուլյաննու միշտ կարող ե իր գլուխը ներս կոխել այստեղ, վորտեղ մեր միջոցառումները թույլ են, վորտեղ վորեւ ճեղքաձիգ ե առաջանում: Շատ դեպքեր կան, յերբ մեր կազմակերպությունների անուշագիր վերաբերմունքի պատճառով, շուկայում կոլտնտեսականին սպեկուլյանտից չզանազանելու դեպքում, շուկայում նրանց առանձին տեղեր չնատկացնելու: և այլ պատճառներով, միջնորդ—սպեկուլյաններին հաջողվում ե գներ կոլտնտեսականների ապրանքը և հետո թանգ գներով շուկայում վաճառել կան այնպիսի դեպքեր յերբ սպեկուլյանտը քաղաքներից 10—20 կիլոմետր հեռավորության վրա զիմավորում ե կոլտնտեսականին կամ անհատական զյուղացուն և գնում ե նրանից մթերքներ, վորոնց մի մասի զեմ նա տալիս ե արդյունաբերական ապրանքներով, վորը նմանապիս ձեռք ե բերել սպեկուլյացիայի միջոցով: Միջնորդ—սպեկուլյանների դեմ կովելը նետեապիս չի կարելի սահմանափակել միայն վարչական միջոցներով:

Բացի վարչական միջոցներից, հարկավոր ե կազմակերպել կոլտնտեսականների և անհատավարների շուկա գուրս գալը, կազմակերպել տունավաճառներ, մասսայական կարսիր գումակներով քաղաքների շուկաներին մասնակցելու սովորությունն, կոռպերացիայի հետ պայմանագրեր կնքել և այլն: Հարկավոր ե մյուս կողմից այնպիս կազմակերպել և այնպիսի հիմքերի վրա դնել արդյունաբերական ապրանքների վաճառքը, վորակեսզի սպեկուլյանտի ձեռքը վոչինչ չընկնի: Այս բոլորը կախված ե բանվորական մասսաների և կոլտնտեսության անդամների ակտիվությունից, կուսակցական, խորհրդային, կոլտնտեսային և կոռպերատիվ որգանների դեկավարության հմտությունից:

Կոլտնտեսային առևտորի ծավալման պրակտիկայում արդեն նկատվել են նաև «ձախ» խոտորությունների դեպքեր: Ստենից առաջ «ձախ» սրարշավի հետևորդները կարծում են, վոր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը բոլորովին զուր են թույլ տալիս առեվտորի ծավալումը: Նրանք կարծում են, վոր հիմա իսկ հարկավոր է անցնել «մթերափոխանակության», կենդրոնացած պլանների համաձայն մթերել գյուղատնտեսական մթերքները և նույնպես կենտրոնացված պլանների համաձայն բաժանել մթերքներն ու արդունաբերական ապրանքները բանվորների և կոլտնտեսականների միջև:

Փողը հիմա իսկ շրջանառության միջոց լինելուց դադարում և և դառնում ե վոչ այլ ինչ, քան հասարակ «տալոն», վորն իրավունք է տալիս պլանային կերպով բաժանվող ապրանքների կամ մթերքների այս կամ այն քանակը ստանալուն:

Այս «ձախ» սփիլիոսփայությունը չի ուզույն հաշվի առնել այն հանդամանքը, վոր կոլտնտեսական, մանավանդ անհատավար գյուղացին, դեռ հեռավոր կերպով են ծանոթ սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինային, վոր դեռ նույնիսկ բանվորության վորոշ խավերը վերջականապես չեն յուրացրել աշխատանքի սոցիալիստական դիսցիպլինան:

Հետեապես այժմ և յեթ «մթերափոխանակության» անցնելու լորունդ տալը, նշանակում ե ցատկել յեղած դրության, ներկա ետապի վրայից դեպի այն ետապը, վորտեղ սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինայի խոր կերպով յուրացման շնորհիվ, կարեք չի լինի տնտեսությանը զարկ տալու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և կորուսաների դեմ պայքարելու համար ստեղծել ավելորդ ստիմուլները: Մի կողմ թողած անհատավար գյուղացիությանը՝ վորը ներկայացնում ե «վերջին կապիտալիստական դասակարգ» վոչ այն պատճառով, վոր բոլոր անհատավար տնտեսությունները կապիտալիստական տնտեսություններ են, այլ այն պաճառով, վոր անհատավար մանը ապրանքային տնտեսությունները կապիտալիզմի բա-

զան են, մենք վոչ մի կերպ չենք կարող պնդել, վոր կոլտնտեսականն արդեն յուրացրել ե սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինան: Մենք չենք կարող ասել, վոր կոլտնտեսականը սոցիալիստական աշխատավոր ե: Ընդհակառակը, մենք ներկա ետապի համար կարող ենք պնդել, վոր կոլտնտեսականը դեռ չի ազատվել իր հին դասակարգային «կաշվից»: Ճիշտ ե, կոլտնտեսությունն իր տիպով սոցիալիստական տնտեսության ձեզերից մեկն ե: Կոլտնտեսության հիմնական արտադրական միջոցները համայնացրած են կոլտնտեսության մասշտաբով: Բայց այդ վոչ մի հիմքը և իրավունք չի տալիս մեզ պնդելու, վոր կոլտնտեսականն արդեն իսկական սոցիալիստական աշխատավոր ե, վոր նա արդեն յուրացրել ե սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինան: Կոլտնտեսականը կոլտնտեսությունում սկսում ե սովորել յուրացնել այդ նոր, սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինան: Նա դեռ ավելի լավ գիտե հին, մանր-բուրժուական աշխատանքի և այդ աշխատանքի համար պահանջվելիք պայմանները, քան նոր աշխատանքային դիսցիպլինան: Ուստի նրա համար միանգամբ չափազանց դժվար և նույնիսկ անըմբռնելի յե «մթերափոխանակության» «ձախ» թերիան:

Մենք նպատակ ենք դրել (և հաջողությամբ այդ իրադրծում ենք) կոլտնտշինարարության զարգացման պրոցեսում աստիճանաբար վերադաստիարակելու կոլտնտեսականին, մանր բուրժուական արտադրողից դարձնելու նրան սոցիալիստական աշխատավորի, յերկրորդ հնգամյակի ընթացքում:

«Ձախ» խոտորումավորներն իրենց այդ թեորիայով կարող են վտանգել և մեծ վնաս հասցնել կոլտնտեսային առևտորի ծավալմանը, վորը կարող է զարկ տալ գյուղատնտեսային մթերքների ապրանքայնության բարձրացմանը և զգալի չափերով բարելավել բանվորական կենտրոնների պարենավորման գործը, վորը կարող է ստիմուլ լինել մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ թագնված հարուստ հարաբեկությունների ոգտագործմամբ՝ ավելացնելու լայն մասսայական սպառման ապրանքների արտադրումը:

Մենք ավելորդ ենք համարում այստեղ կանդ առնել այն հարցի վրա, թե յերբ կզա այն ժամանակը, յերբ կոլտնտեսային առևտուրը տեղի կտա «մթերափոխանակության» և սրա հետ կապված ուրիշ հարցերի վրա, բավականունում ենք ապացուցելով, վոր ներկա ետապի համար այդ առաջարկությունը սխալ ե և վնասակար:

«Ձախ» խոտորումները սակայն, չեն սահմանափակվում այդ թեորիավով: Ընդունելով, խնաքով կոլտնտեսային առևտորի կարեսրությունը, «ձախ» գործերի հերոսներն աշխատում են գործնականում չեղյալ դարձնել այդ առևտուրը: Դրա համար գործադրվում են այնպիսի «հանո-

նավորման» «միջոցներ», վորից հետո կոլտնտեսային առևտրից մնում են «յեղջուրներն ու վոտքերը». Որինակ՝ կուշչկայի ու այլունտաժիությունն առաջարկել ե կոլտնտեսությունների վարչություններին, վորպեսզի նրանք պարտավորեցնեն (յերեկի պարտաթղթեր պետք ե վերցնել Մ.Դ) ամեն մի կոլտնտեսականի, ամսական վրոշ գումար մթերք հանձնել կոլտնտեսային կրպակներին. Ուրիշ տեղերում կոլտնտեսականներին պարտավորեցնում են իրենց մթերքները ծախել վարչական կարգով վորոշված գներով: Այս և սրանց նման «կարգադրությունները» լինելով կուսակցական գծի կոպիտ խեղաթյուրումները, իհարկե չեն կարող ոժանդակել կոլտնտեսային առևտրի զարգացմանը: Կոլտնտեսային առևտրի ծավալմանը ոժանդակելու փոխարեն, այդ «միջոցառությունները» մեղցնում են կոլտնտեսային առևտրի գոյության պայմանները՝ գործնականում դարձնելով այդ մթերման ձևերից մեկը:

Բացարենք, թե ինչո՞ւ «ձախ» խոտորումները գործնականում առևտուրը դարձնում են մթերման ձև:

Ինչո՞ւմ ե կայանում կոլտնտեսային առևտրի զանազանությունը կետնրոնացած պլանային մթերումներից:

Զանազանությունը հետևյալում ե. մթերումների ժամանակ պրոլետարական պետությունը նախորոք վորոշված գներով գնում ե կոլտնտեսություններից, անհատավար գյուղացիներից վորոշ պլանով նախատեսնված քանակի ու տեսակի մթերքներ: Այդ մթերքների պետության ծախելը ձևակերպվում են կոնտրակցիոն պայմանագրերով և դառնում են պարտադիր:

Կոլտնտեսային առևտուրը նրանով ե զանազանվում մթերումից, վոր այսեղ գները վորոշվում են շուկայում դասավորվող պայմաններից, շուկայում գոյություն ունեցող պահանջից և առաջարկությունից, վոր այսեղ վոչ վոք, վոչվոքի չի ստիպում այս կամ այն քանակի ու տեսակի մթերք շուկա դուրս հանել, այլ ամեն մի կոլտնտեսական, ամեն մի անհատավար ըստ իր հայեցողության շուկա յե դուրս հանում այն մթերքները, վորն ավելորդ ե համարում իր սեփական տընտեսության ու առանձնական կարիքներին բավարարելուց հետո:

Պարզ ե, վոր այն պրակտիկան, վորի մասին մենք վերև խոսեցինք, վերացնում ե այս զանազանությունը և սկզբունքով ընդունելով կոլտնտեսային առևտրի ծավալման կարևորությունը, գործնականով դարձնում ե այդ մթերման ձև: Յեկի, իսկապես, յեթե մենք կոլտնտեսականին ստիպենք, պարտավորացնենք վորոշվածքանակով և տեսակով ապրանքներ հանձնել կոլտնտեսային շուկային, կամ պարապուացնենք վորոշված գնուվ, ապա մենք խախտած կինենք կոլտնտեսային առևտրի հիմնական բնույթը:

Կարող ե հարց ծագել. ի՞նչ վնաս, յեթե կոլտնտեսային առևտուրը գառնում է մթերում: Դիմավորը այն ստիմուլը, վորը զարկ ե տալիս մթերքների և ապրանքների արտադրության աճին, գների բարձր լինելն ե: Բավական է գները բարձրացնել, և կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և անհատավարները, ինչպես նաև մեր տնտեսավարական հաշվով աշխատող սոցիալիստական ձեռնարկները կտան այնքան ապրանքային արտադրում, վորքան կամենաք:

Այս կետում մենք ստանում ենք աշերի «ձախերի» թերիաների յուրատեսակ միացում: Համարի գործը այստեղ հացվում է աշերի ցանկացածին:

Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, գներն իջեցնելու քաղաքականությունն ե: Գների միաժամանակ բարձրացումը՝ առանձ աշխատավարձի փոնդի ավելացմանը, կնշանակե բանվորների աշխատավարձի իջեցումը: Պարզ ե, վոր դա մեր քաղաքականությունը չե: Խոկ յեթե գների բարձրացման հետ միաժամանակ, բարձրացնենք նաև աշխատավարձի փոնդը, ապա դա դրությունը փոխել չի կարող: Այդ կնշանակեր միայն, վոր մեր չերվոնեցը կորցրեց իր գներու նախկին ընդունակությունը:

Բայց այս հարցում զիսավոր սիտալն ու միանգամայն աննդունելին այն ե, վոր գների բորձրացման դիմակի տակ, առաջարկվում ե հրաժարվել բոլորովին պլանային շահուսությունից, հետ գառնալ գեպի ազատ, լիակատար ազատ առևտուր: Տեղի տալ կուլակային ազգեցության առաջ:

«Բարձրացրեք գները և կոլտնտեսությունները, կոլտնտեսականներն ու անհատավար գյուղացիները զարկ կտան ապրանքային մթերքների արտադրությանը»: Այդպիս ասելը կնշանակե ասել՝ «ձեռք քաշեցնեք գյուղատնտեսությունը պլանավորելուց: Հրաժարվեցնեք պլանային մթերումներից, հրաժարվեցնեք շուկայի վրա ազդեցություն գործելու զեկավարությունից և կստանաք այնքան, ինչքան վոր կպահանջե շուկան»: Ի՞նչ կապակցություն կա, առաջին հայացքից, այս յերկու դրությունների մեջ:

Ի՞նչպես կարելի յե կապել գները բարձրացնելու առաջարկը պլանավորման փորձերից հրաժարվելու հետ:

Մենք գիտենք, վոր շուկայի գների ներգործությամբ ե բացատրվում շուկայում ապրանքների ավելանալու կամ պակասելու փաստը կապիտալիստական կարգերի տիրտպետության ժամանակ: Շուկայի բարձր ու ցածր գներից ե կախված կապիտալիստական արդյունաբերության ուղղությունը: Յեթե շուկայում վորոշ ապրանքների գները բարձր ե լինում, ապա այդ ապրանքների արտադրության արդյունաբերական ճյուղը ստիմուլ ե ստանում զարգանալու: Կապիտալիստները

սկսում են հավաքվել այդ ճյուղում և զարկ են տալիս այդ ապրանք՝ ների արտադրության, մինչ այն ժամանակ, յերբ ապրանքներն այնքան շատանում են, վոր առաջարկը ծածկում և պահանջը և մի բան ել ավել, վորից հետո գներն սկսում են ընկնել: Շուկայի գների բարձրանալը քողարկված կերպով շուկայի տարերայնության կանոնավորող գերի ընդունելն են նշանակում: «Դները ամեն բան կանոնավորեն» ասելը՝ իր հերթին նշանակում են ընդունել կապիտալիստական անիշխանական տնտեսություն վարելու առաջարկությունը—տնտեսությունը պլանային ազդեցությունից ։ «ազատելու»:

Իր ժամանակին աջ ոպողիցիան Բուխարինի բերանով պահանջում եր գյուղատնտեսական մթերքների համար «վերաշինման գներ» նշանակել: Ուրիշ խոսքով աջերը պահանջում եցին բարձրացնել գյուղատնտեսական մթերքների գները:

Աջերի այդ կուլակային ցանկությունների և ազդեցությունների արտահայտիչների, գների բարձրացման առաջարկը վորը իր ժամանակին դատապարտվել եր կուսակցության կողմից, հիմա տեղ-տեղ կենդանություն և ստանում՝ ձախ ֆրազների քողի տակ: «Կարելի յեքարձր գներ նշանակել, բայց անպատճառ վարչական կարգով գին նշանակել»—այսպես են ձեւակերպում իրենց պահանջները «ձախ» գործերի հերոսները, կոլտնտեսային առևտուրի վորոշումների: Հետ իրենց անհամաձայնությունը քողարկելով: «Մենք դեմ չենք կուտնտեսային առևտուրին, բայց գները մենք վարչական կարգով կնշանակենք, յեթե վոչ կուտնտեսականները սպեկուլյանտների կվերածվեն»—կամ և այսպես ասողներ: Վերըուծենք և այս առաջարկությունը, վորը պարունակում եր մեջ հակա-նեղափոխական արոցկիզմի անհավատությունը, դեպի ոսցիալիզմի կառուցումը մեր յերկում, այն անհավատությունը, թե գյուղացին բանվորի հետ մինչև վերջը չի գնա, «կուտնտեսականը սպեկուլյանտի կվերածվի», ուրեմն նա չի կարող սոցիալիստական աշխատավոր դառնալ:

Կուտնտեսականին պետք է միշտ վարչական ձևերով, բռնի ուժով կուտնտեսության շրջանակում պահել և վոչ մի վստահություն, վոչ մի նույս չդնել այն բանին, թե նա կամավոր կերպով կարող և սոցիալիզմ կառուցել բանվոր դասակարգի դեկավարությամբ: Միայն այսպես կարելի յե հասկանալ այդպիսի պնդումը: Բայց ինչ հիմք կա կուտնտեսականի վրա այդպես նայելու: Բոլորովին ավելորդ և ապացուցել, վոր կուտնտեսականը, վորը կամավոր, հոժարակամ կերպով մտել և կուտնտեսություն և ակտիվ կերպով աշխատում ե կուտնտեսության կազմակերպչական-տնտեսական ամրացման համար, վորն արդեն փորձից և վոչ միայն խոսքերից, գիտե կուտնտեսության առավելությունների մասին, այսոր, կուտնտեսային առևտուրի թույլա-

տրությամբ, նրա ծավալման պատճառով յերեք չի ցանկանա կոլտնտեսությունից գուրս գալ, ուր մնաց թե սպեկուլյանտ դառնալու Բոլորովին ավելորդ և ապացուցել, վոր կուտնտեսայինը կարիք չի դկա սպեկուլյանտ գառնալու այն պարզ պատճառով, վոր կուտնտեսային առևտուրի և նրա ծավալման ոգտին յեղած վորոշումները կոլտնտեսականին դնում են ավելի արտօնյալ պայմաններում, քան անհատավար գյուղացուն, առևտուրի հարկադրման տեսակետից: Իսկ ինչ վերաբերվում ե սպեկուլյանտներին, այդ նույն վորոշումները պահանջում են սպեկուլյանտին բոլորովին: արմատախիլ անել: Այս բուլորից հետո ի՞նչն ե ստիպելու կոլտնտեսականին (այդ դեպքում, յերբ գները վարչական կարգով չնշանակվեն) սպեկուլյանտ դառնալու, պարզ չե սիթե, վոր այստեղ խոսքը գներ նշանակելու կամ չընշանակելու մասին չի, այլ այն մասին, թե գյուղացիությունը չի կարող սոցիալիստական շինարարարությանը մասնակից լինել: Պարզ չե սիթե, վոր այստեղ մենք գործ ունենք արոցկիստական հակա-նեղափոխական, կյանքի փորձերով քանիցս ջախջախված տեսության հետ:

Խորհրդային և կուտնտեսային առևտուրը չեն հակադրվում պլանին, այլ միմիանց՝ լրացնում են: Մեր տնտեսությունը պլանային տնտեսություն ե: Մեր սոցիալիստական արդյունաբերության այս կամ այն ճյուղերի զարգացումը, մեր կուտնտեսային և խորհրդային գյուղատնտեսության աճն ուղղվելու վորոշում են վոչ թե շուկան և շուկայում գների ազատ խաղը, այլ սոցիալիստական շինարարության պլանը: Շնորհիվ այն բանի, վոր պլանային տնտեսություն ենք վարում, մենք գիտակցութեն զարկ ենք տալիս տնտեսության այն ճյուղերին, վրոնք հարավորություններ են ստեղծում ժողովրդական տնտեսության վերակառուցման համար, ամենաառաջավոր տեխնիկայի բազայի վրա: Մենք գիտակցութեն զարգացնում ենք ծանր արդյունաբերության, ելեկտրոշինարարության, արանոպրացյին և մեքենաշինարարության ճյուղերն ավելի արագ թափերով՝ քան թեթև արդյունաբերության ճյուղերը, մինչդեռ յեթե շուկան և շուկայում դասավորվող գները լինեն տնտեսության կանոնավորող (ինչպես այդ տեղի ունի կապիտալիստական կարգերում), մեղանում տեղի պիտի ունենար տնտեսության զարգացման հակառակ շարժում: ծանր արդյունաբերությունն ավելի զանդաղ պիտի զարգանար, քան թեթև արդյունաբերությունը: Գիտակցութեն այդպիսի ուղղում տալով մեր տնտեսության զարգացման թափերին, մենք արդեն հասել ենք այնպիսի կետին, վորից հետո, առանց զանդաղեցնելու ծանր արդյունաբերության զարգացման թափերը, կարող ենք արագացնել թեթև արդյունաբերության զարգացման թափերը:

Պահանջին տնտեսության ու նրա հետ կապված հաշվառքի միջոցով, նմեք հիմա ավելի լավ և լրիվ կերպով գիտենք մեր արդյունաբերության մեջ յեղած հնարավորությունները, վորոնք առաջ չեցին ոգտագործվում լիովին: Մյուս կողմից խորհնատեսությունների կազմակերպումն ու կոլտնտշինարարության լայն ծավալումը, ու այդ հիման վրա կուլակներին վորպես դասակարգ վոչչացնելու գործը հիմնականում ավարտելով, մենք հնարավորություն ստացանք ավելի լայն չափով պլանավորել գյուղատնաեսական ճյուղերն ևս: Կոլտնտեսությունների պլանավորման փորձերը ցույց տվին, վոր կոլտնտշինարարության ներկա ետապում, կոլտնտեսականների ներկա, անցողական վիճակում չափաղանց կարևոր և գտնել այնպիսի ձեւ, վորը չվնասելով պլանային առաջարրություններին, արագացներ կոլտնտեսությունների և կոլտնտեսականների չհամայնացրած տնտեսության արտադրանքի ապրանքային մասի աճը: Յեվ այդ ձեւը գտնվեց: Դա կոլտնտեսային առևտուրն է, վորը վոչ մի դեպքում չի հակադրում պլանին, այլ հնարավոր ե դարձնում պլանային առաջարկումները գերակատարել:

Այս ճշմարտության չըմբռնելն ու կուլտակային ազդեցության մասնվեն ե, վոր առաջ ե բերում կուլակցության շարքերում աջ և «Ճախ» թեքումները կոլտնտեսային առևտություն ծավալման խնդրում:

Կոլտնտեսության կայունության և նրա հետագա զարդացման հանդեպ թերահավատ կարծիք ունենալն է, բանվոր դասակարգի ընդունակություններին և ստեղծագործական տաղանդին չհավատալն ե, սոցիալիզմի կառուցմանը անհավատ վերաբերմունքն ե, վոր ժամանակ առ ժամանակ կենդանացնում և հակառակապիխական տրոցկիստական դրույթները մեր իրականության մեջ:

Անինա պայքար հայտարարելով այդ բժնոր թեքումներին, մանավանդ ներկա ետապում աջ, ավելի վուանգավոր թեքման, հակառակափոխական տրոցկիզմը և նրանց վերաբերմամբ հաշվողականության և փոտած լիբերալիզմի գեմ, մենք կապահովենք կոլտնտեսային առևտություն ծավալումը: Այս հարցում ևս կուսակցության գլխավոր գծի անխախտ և անթեքում կատարելու պայմանով միայն հնարավոր և զարկ տալ գյուղատնաեսական միերքների նորանոր տօններ շուկա գուրս գալուն, լայն սպառման ապրանքների արտադրման աճը ապահովելուն, մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ յեղած հնարավորությունները—իրականություն դարձնելուն:

## Յ Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ

Սոցիալիզմի հաղթական վերելքը և կապիտալիստական ելեմնաների վոչչացման պրոցեսը, վորն ամենաարագ թափերով տեղի յի ունենում ԽՍՀՄ-ում, պարզ ապացույց են այն բանին, վոր կոմու-

նիստական կուսակցությունը վարում ե ուղիղ քաղաքականությունը բանվոր գասակարգի և կոլտնտեսականների տեսղական, հիմնական աների պաշտպանման տեսակետից: Այն փասար, վոր մենք արդեն ավարտել ենք սոցիալիզմի հիմքի կառուցումը և առաջիկո յերրկորդ հնգամյակի ընթացքում կառուցելու յենք անդասակարգ սոցիալիստական հասարակություն, վկայուած են մեր սոցիալիստական շինարարության ճակատում ունեցած հակայսկան հաղթությունների մասին, դասակարգային թշնամիների պարտության մասին, սոցիալիզմի հաղթանակում:

«Կոմունիզմի ուրվականը շրջաւմ և Յովրություն», տաել են մարքսիզմի հիմնադիրները «Կոմունիստական Մանեֆիստի» առաջին տողերում՝ դեռ 1840 թվականներում:

«Կոմունիզմը, և վոչ նրա ուրվականն ե տիրում ԽՍՀՄ-ում», կարող ենք ասել մենք այսոր:

Սոցիալիզմը հետագալի իդեալ չե, այդ արդեն սեալ փաստ ե: Այդպես ե ձմարտությունը:

Նա իրականացել ե մեզանում կատաղի դասակարգային պայքարի պայմաններում, վորի ժամանակը բանվոր դասակարգը գյուղացիական լայն մասսաների զինակցությամբ հաղթահարել ե ամեն տեսակի կապիտալիստական ելեմնաների կստաղի դիմադրությանը, բուրժուական ամեն տեսակի ազգեցություններին և արտահայտություններին ուժեղ և անխնա պայքար հայտարարելով:

Սոցիալիզմի շինարարությունը շարունակվում ե: Դասակարգային պայքարը նույնպիս շարունակվում ե: Դասակարգային պայքարը գտնում ե իր արտացոլումը բանվոր դասակարգի ավանդարդի անկայուն ողակների, առանձին կուսակց սկզբների, կուսակցության առանձին ողակների վրա:

Վերելքը միշտ գծվար ե լինում: Վերելքի ժամանակ պառահում են զեպքեր, յերբ հազնածները՝ նեխված ու թույլերը վախենալով զըժ-վարություններից, ճանապարհից շեղում են, հետ են սոզում, նահանջում և ուրիշներին ել իրենց հետերից կանչում:

Չնայած սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած հաղթանակներին, շինս բարության ներկա ետագը գեռ բոլորովին գուրկ չե գծվարություններից: Ներկա ետագի բնորոշ գրժվարությունն այն ե, վոր անտիբի չափերով աճող պարենավորման և լայն սպառման ապրանքների պահանջը լիովին չի բավարարվում:

Դասակարգային թշնամին և նրա յետերը նրա խոսքերը յուրատիսակ թոփովելով, աջ ու «Ճախ» ուղարտունիստները աճեն մի ճիգ ու ջոնք գործ են զնում, միջոցների առաջ կանգ չեն առնում և ուղում են համոզել ուրիշներին ել թե գծվարությունների պատճառը սոցիա-

Նիստական շինարարության վերելքն ու նրա հետ անքականի կերպով կապված աշխատավոր մասսաների պահանջների աճը չե, այլ կուսակ- ցության սիստ քաղաքականությունն եւ:

Անցյալում, բաց կուֆերում հաղթահարված, բայց գեռ բոլո- րովին չչարդված թշնամին հիմա ավելի քողարկված, ավելի բարդ մե- թոդներով բաց վոչ պակաս կատաղի կերպով և շարունակում պայ- քարը: Նա իր գարշելի գեմքը ցույց եւ տալիս ամեն տեղ, ամեն ժամ, ամեն մի առթիվ: Կոլտնտեսային կազմակերպչական-տնտեսական ած- րապնդան խնդիրներում նա, զասակարգային թշնամին, ցույց եւ տալիս իր գեմքը՝ աշխատանքի կազմակերպ ան, աշխորերի, աշխա- տանքային դիցիալինայի, յեկամւաների բաշխուան ձեփ և ուրիշ հարցերում: Կուլակը այս հարցերում կողմնակի յեւ աշխատանքի հաշ- վառք չունենալուն, դիմադրկությունը պաշտպանելուն, աշխատան- քային ու տեխնիկական նորմաներ չնշանակելուն, յեկամւաների բաժանման մեջ հավասարանք պաշտպանելուն և այլն: Նա գետ և թա- փերին, դիմ և աշխատանքի վորակը լավացնելուն, գետ և հողի մշակ- ման և առ հասարակ գյուղատնեսության մեջ տեխնիկական և դիտա- կան կատարելագործված մեթոդներին: Յեփ, իհարկի, գետ և կուսակցու- թյան ամեն մի նոր վորոշումներին: Բայց նա—զասակարգային թշնա- մին, իր թշնամական վերաբերումները այդ բոլոր հարցերում քողարկ- ված կերպով և արտահայտում: Հարցերի նորությունը, հարցերի վերա- բերմանք փորձերի բացակայությունն անցյալում և այն հանդամանքը, վոր կոլտնտեսային գյուղացիությունը դարերի ընթացքում սնվել և մանր սեփականատիրական, մանր-բութուական դործով ու իդե- լոգիայով: Հեշտացնում են թշնամուն նրա քողարկված վնասա- տու մտքերի ու գործի վորոշ չափով տարածվելու գործին այնտեղ, վորտեղ տեղական կուսակցական կազմակերպությունը, կոմյերիսը, խորհուրդը չեն զորահավաքված, չեն զինված մարքսիստյան-լենինյան- ստալինյան ուսմունքի ուժեղ զենքով, արթուն ու պատրաստ չեն կանգնած իրենց դիրքերում:

Շատ գեպքում կարծում են, վոր «կուլակը վորպես գասակարգ վոչն- չացվել ե», մեզանում համատարած կոլտնտեսություն ե, ել վորտեղից կարող և առաջանալ զասակարգային պայքարը, կուլակային աղդե- ցությունը:

Եերանելիներ: Մոռանում են, վոր կուլակային աղդեցությունը չի վերջանում կուլակներին վորպես գասակարգ վոչնչացնելուց հետո ևս, յեթե նույնիսկ մի բոպե յենթադրենք, վոր ամեն տեղ կարողացել ենք ժամանակին հայտաբերել մերկացնել կուլակին, յեթե նույնիսկ մի ըոպե յենթադրենք, վոր վոչ մի կոլտնտեսությունում, վոչ մի հատ խցված կուլակ չի մնացել:

Զկա ավելի սխալ բան, քան կարծել, թե վորեւ դառակարգի, նույնիսկ ֆիզիկապես վոչնչանալուց հետո, անմիջապես վոչնչանում ե և նրա ազգեցությունը: Մանավանդ, յեթե այդ դասակարգը յեղել և նախկին տիրող գասակարգ և հետեապես նրա իդիոլոգիան տիրող և յեղել և բնականորեն ազգել և մնացյալ դասակարգերի վրա: Այն կոնկ- րետ հարցուե, վորի մասին մենք խոսում ենք, այսինքն՝ այն մասին, թե կարչում, վոչնչանում արդյոք կուլակային աղդեցությունը՝ կու- լակներին վորպես դասակարգ վոչնչացնելուց ամիջապես հետո, մեր պատասխանը այլ չի կարող լինել—Վոչ, չի վոչնչանում, չի կորչուա- տյդպես շատ կուլակի և առնասարակ բուրժուավական աղդեցությունը: Նախկին միջակ գյուղացին, այսրդակ կուլակային աղդեցությունից: Անցյալի աղդեցու- թյուննից աղատպելը—դա տարիների հարց ե:

Յեկ գարձայլ չկա ավելի սխալ բան, քան կարծել, թե այդ պրո- ցես—«մարդկանց գիտակցության մեջ» բուրժուական աղդեցության վերացնելը կընթանա խաղաղ և սահուն Վոչ, այդ պրոցես դասա- կարգային պայքարի բովով անցնող պրոցեսն եւ Դասակարգային թթշ- նամին և նրա հետ, վորպես նրա զինակիցը—«սովորությունների ու- ժը» (Լենին) զեռ կատաղի դիմապրություն են ցույց տալու:

Հազթանակը մերն ել լինելու,—այդ մասին վոչ մի կասկած լինել չի կարող—բայց հազթանակը տանելու ձանապարհին մենք կ ւնե- նանք տաք կուլակը՝ վերջին շունչը փչող թշնամու գետ, վորի դիմադ- րությունը կըազմապատկի՞՝ նրա մահվան որը մոտենալիս:

Այդպիսի կուլակը մեկն ել կուլանտեսային առևտորի ծավալման կորիզն ե: Վերառում մենք բնութագրեցինք կովի ձեերը, մեթոդներն ու վայրերը: Աններեկի հանգանություն և կամսնապարձություն կիրիներ կարծել, վոր այստեղ մենք սպառեցինք կովի բոլոր ձեերն ու մեթոդ- ների բնութագրումը: Անշուշտ, կոլտնտեսային առևտորի ծավալման պրոցեսը կհայտնաբերի գասակարգային թշնամու և նրա աղենտատուրա- ուորոտունիստների նոր առարկումները, կուլանտեսային առևտորի ծա- վալման նոր արգելքները:

Արթնությամբ հսկել և ժամանակին մերկացնել թշնամու նոր դագերը, ժամանակին և անխնա ջախջախել թշնամուն և շուտափույտ կերպով հեռացնել նրա դրած արգելքները—այս և կոլտնտեսային առևտորի ծավալման աղանովականը:

Այս խնդիրները բոլիկիորեն լուծելու համար հարկավոր և խորը կերպով ուսումնասիրել կուսակցության վարուումները և լավ հասկա- նալ, վոր կոլտնտեսային առևտորի ծավալելը կարող և շատ մեծ ար- դյունքներ տալ ներկա հտապի գժվարությունները վերցնելու տեսա- կետից:

«Մեր դժկարաւրյունները մեր անոմք դժկարութիւններն են յիս նրանց լուծման միջոցները պարաւնակվում են մեր տնտեսության զարգացման գործման մեջ»:

(Ստալին)

Ներկա ետապի դժվարությունների լուծման միջոցները պարունակում են նմանապես մեր տնտեսության զարգացման մեջ, վորին խոշոր զարկ տալու համար կուսակցությունը ընդունի և կոլտնտեսութիւնը առեւտքի ծավալման վորոշումները:

Համարձակորեն, առանց տատանումների, առանց ուշադրություն դարձնելու կուլակների և նրանց ազենտուրայի վոռնոցներին, նրանց պրավակացիոն լուրերին և յելույթներին, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ—առաջ, ղեպի խորհրդացյին և կոլտնտեսային առետքի ծավալումը և նրա միջոցով սոցիալիզմի վերջնական կառուցման ինդիքների լուծումը:

### ՀԱՎԱԼՈՒՄՆԵՐ

## 1932 ԹՎԻ ԲԵՐՔԻՑ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՀԱՅԱՄԹԵՐՂԻՄՆԵՐԻ ԴԼԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՌԵՎՑՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՉԻ ՅԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ  
ՎՈՐՈՇՈՒՄԸ)

1. Տնտեսության կոլտնտեսային և խորհունտեսային սիստեմի առնատական տնտեսության դեմ տարած հաղթանակի և գյուղի կուլակային տարրերի ջախջախման հիման վրա, Խորհրդացյին Միությունն յերկու տարում ունեցավ հացային տնտեսության այնպիսի ծավալում, ցանքատարածությունների ընդուրկում և հացահատիկի ընդհանուր արտադրանքի աճ, վոր անհատական տեսեսության հիման վրա 1928 թվի բերքից մթերքած 660 միլիոն փուր հաց սնամիկի փոխարեն (աղունավարձի հետ միասին) 1930 թ. պետական հացամթերումները հասնում են 1 միլիարդ 350 միլիոն փուր հացահատիկի (աղունավարձի հետ միասին) յեվ 1931 թվին, չնայած յերաշեն, 1 միլիարդ 400 միլիոն փուր (աղունավարձի հետ միասին):

Այդ հաջողություններն ամենից առաջ բացատրվում են նրանով, վոր կոլտնտեսությունները վորպես խոշոր միացյալ տնտեսություն, համարավություն ստացան ՄՏՏ միջոցով կիրառել և լավագույն ձեզով ոգտագործել տրակտորներն ու մեքենաները. ընդարձակել ցանքատարածությունները և լավացնել գործի ազրոտեխնիկական կողմը, իսկ խորհունտեսությունները վերածվեցին հացահատիկի խոշոր ֆարմիկների, ապահովերվ պետությանը տարեց տարի աճող հացափոնդը. Ծընորհիվ լենինյան կուսակցության քաղաքականության իրականաց-

ման, յերկրը դուրս յեկավ հացային տնտեսության ձղնաժամկց և հաղթահարում և անցյալ տարգա յերաշակից առաջացած զժվարությունները Խորհրդացյին Միության արևելյան ույաններում ավելի հաջող քան նախորդ յերաշակությին տարիններում, յերբ մանը գյուղացիական տնտեսությունը դեռ տիրապետում էր մեր յերկրում:

2. Միաժամանակ, արդյունաբերության ասպարիզում, հնգամյակի իրագործման նվաճումների հետեւանքով, զնալով աճում են Խորհրդացյին Միության հնարավորությունները արդյունաբերական ապրանքներ արտադրելու տեսակետք, ինչպես կոլտնտեսությունների արտադրական, այնպես ել զյուղի աշխատվառների սպառողական կարիքները բավարարելու համար:

Արդյունաբերական ապրանքների անառնեաց յեվ զյուղի հացահատիկի արտադրության անման կապակցությամբ, մեծանում են կոլտնտեսային առեվտրի ծալայման հնարավորությունները: Կոլտնտեսային առեվտրուր դառնում և բարդացների զյուղահանեսական արտադրության մթերքներով մատակարարման միջոց:

Այս հնագամանքի կապակցությամբ, խորհրդացյին իշխանությունը հնարավորություն սացագ պետական հացամթերումների մերսդին զուգընթաց գործադրել այլ մերող, իրենց, կոլտնտեսությունների յեվ կոլտնտեսականների կողմից հացը վաճառելու մերողը՝ վորպես հազարի ազգաբնակչության մատակարարման միջոց:

Խնդիրը կայանում և նրանում, վորպեսի քաղաքի և գյուղի միջեվ ապրանքաշրջանառության հետագա լավացման և քաղաքի աղկաբնակչության մատակարարման զգալի բարելավման նպատակով, կապակցվեն արդ յերկու միթողները և գյուղացիական սեկուրի զծովը պետական հացամթերումների վօրու կրնաման հավին ծավալիկի կոլտնտեսային հացի առեվտրը, միաժամանակ ավելացնելով մթերումները խորհնեսային սեկուրամ:

Այս բոլորի հիման վրա, ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների խորհուրդը ու Համկոմկուսի (ը) Կենտրոնական կոմիտեն վորոշում են.

ա) ԽՍՀՄ-ում 1932 թվին կոլտնտեսությունների յեվ անհատականների բերքից հացամթերումների պետական պլանը 1931 թվի համեմատությամբ կրնաման 264 միլ. փուր, 1932 թ. պլանի համար սահմանելով 1 միլիարդ 103 միլ. փուր, միջին բերքամիավան դեպքում (առանց աղունավարձի) անցյալ տարվա 1 միլիարդ 367 միլիոն փուրի դիմաց:

Սրան համապատասխան, սահմանել հացամթերումների հետեւյալ պլանը, ըստ ույանների (առանց աղունավարձի).—Աւելանալու — 356 միլիոն փուր, անցյալ տարգա 434 միլ. փուրի դիմաց. Հյուսիսային Կոմիսարում — 136 միլ. փուր. անցյալ տարվա 154 միլ. փուր պլանի դիմաց. (վորշամ մեջ այնունետեւ հիշված են մացած բոլոր ույանների հացամթերումների պլանները. Խմբ.):

բ) Խորհուտեսային տնտեսության աճման համապատասխան աշխալցնել 1932 թվին բոլոր սխառների խորհուտեսությունների հաշամթերման պլանը մինչև 151 միլիոն փութ, անցյալ տարու և մթերված 108 միլիոն փթի հանդեպ:

գ) 1932 թվի բերքեց հացամթերումների պլանը կատարել վոչ ուշ, քան 1933 թվի հունվարի մեկը:

դ) Խերմային ֆոնդերի պատրաստումն ավարտել վոչ ուշ, քան 1933 թվի հունվարի 15-ը:

ե) Նպատակահարժարմար համարել հացամթերումների ներկա պլանը և սերմային ֆոնդերի պատրաստումն ավարտելուց հետո, այսինքն 1933 թվի հունվարի 15-ից սկսած կոլտնաեսություններին և կոլտնտեսականներին լիակատար հնարավորություն տալ—անարդել վաճառել իրենց ավելի հացն, ըստ իրենց հայեցողության թե շուկաներում և թե իրենց կոլտնտեսային խանութներում, պարտավորացնելով տեղական իշխանություններին ցույց տալ կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին լիակատար աջակցություն այդ բանում և միջոցներ ձեռք տոնել արմատախիլ անելու մասնավորներին և զնորդ—սպեկուլյատներին, վորոնք փորձում են շահագործել կոլտնտեսային առևտուրը:

Խորհրդային Միության Փողկոմիտրհի նախադա՞ւ

Ա. Մոլոսով (Սկրյաբին)

Համկոմիտութիւն (Բ) Կենտկոմի քարտուղար՝ Ա. Ասալին

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՌԵՎԾՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՌԵՎԾՐԵԼՈՒ ՀԱՐԿԻ ՊԱԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

### Խ. ՄԻԱԽՅԱՆ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐԾԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Նպատակ ունենալով աջակցել կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատական աշխատավոր գյուղացիների իրենց գյուղատնտեսական մթերքների առեվտրի ծավալմանը, ժողկոմիտրհի և ՀԿ (բ) Կենտկոմի 1932 թվի մայիսի 6 և 10 փորոշումների հիման վրա, Խորհրդային Միության Կենտգործկոմի ու Փողկոմիտրհը վորոշում են.

1. Վերացնել գոյություն ունեցող բոլոր հանրապետական և տեղական հարկերն ու հավաքները, վոր ստացվում են կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատական աշխատավոր գյուղացիների իրեց սեփական գյուղատնտեսական մթերքների վաճառքից շուկաներում, հրապարակներում, յերկաթուղիների կայտաներում, նավահանգիստներում (հաց, միս, թոչուն, ձու, կաթնամթերքներ, բանջարեղեն, մրգեր և այլն):

2. Շուկաները մաքուր պահելու և շուկաների կառուցման ծախսերը հագալու համար, թույլ տալ միանվագ հավաք, ըստ վորում այդ հավաքը չպետք է ավելի լինի, քան մի ուրեմի—սայլաբեռի առեվտրից և 20 կոպեկ՝ ձեռքի առեվտրից, մի ուրեմի խոչըր յեղջարավոր անսունի առեվտրից և 50 կոպեկ մանր անսունից:

3. Արգիլիկ աեղական միանվագ հավաքը թոչունի, ձվի, կաթի, յուղի, պանրի ձեռքի առեվտրից, վորը կատարում են կոլտնտեսությունները և անհատական աշխատավոր գյուղացիները:

4. Պարտավորացնել տեղական խորհրդներին առավելապես իջևանի կոլտնտեսային կրատեկների և խանութների շենքերից վերց, վոր կապալավճարները:

5. Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացված յեկամուտները չեն յենթարկվում գյուղատնտեսական հարկման:

6. Աշխատավոր անհատականների, յյուղատնտեսական մթերքների վաճառումից ստացած յեկամուտները գյուղատնտեսական հարկման են յինթարկվում վոչ ավելի, քան յեկամուտների 30 տոկոսի չափը, զրան համապատասխան փոխվում է 1932 թվի գյուղատնտեսական հարկի կանոնադրության 5. րդ կետը:

7. Կոլտնտեսությունների բացած կրատեկները, վրանները, իանութները, իրենց գյուղատնտեսական մթերքների վաճառքի համար հարկվում են պակաս չափով, այն և առեվտրից ստացած ընդհանուր յեկամուտի 3 տոկոսի չափի:

8. Կոլտնտեսային միավորումների, միությունների (ույյոնական, մարդային, յերկրային, հանրապետական և միութենական) բացած կրատեկներն ու խանութներն ողտվում են նույնպիսի հարկային արտօնություններով, ինչպես կոռագերացիան:

9. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատական աշխատավոր գյուղացիների առեվտրուրը պետք է կատարվի շուկայում կազմվող գների համաձայն, իսկ կոլտնտեսային միավորումների առեվտրուրը, վոչ ավելի՝ պետական առեվտրի միջն առեվտրական գներից:

10. Թույլ չտալ մասնավոր առեվտրականներին բաց անելու կըրպակներ և խանութներ, ամեն կեու արմատախիլ անելով գնորդներին և սպեկուլյանտներին, վորոնք փորձում են շահել բանվորների և գյուղացիների հաշվին:

11. Առաջարկել միութենական հանրապետությունների կենտրոնացներին, անմիջապես փոխել այս վորոշմանը հակասող բոլոր վորոշումներն ու կարգադրությունները:

Խոր. Միության Կենտգործկոմի նախագահ՝ Ա. Կալինին  
Փողկոմիտութիւն (Սկրյաբին)  
Կենտգործկոմի քարտուղար՝ Ա. Շենօւեկին

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդային առեվտրի գարզացման պայմանները . . . . .	3
2. Եխովին ոգտագործենք բոլոր ննարավորությունները . . . . .	11
3. Հարկավոր և պայքարել կոլտնտեսային առեվտրի ծավալ-	
ման համար յերկու ճակատում ևս . . . . .	18
4. Յեզրափակում . . . . .	28
5. Հավելումներ . . . . .	32

Ответственный редактор А. Г. Аваков. Техн.  
редактор Г. М. Маркарян. Издание № 121. Об'ем  
печ. 2<sup>1/4</sup> листа. Сдано в набор 2-Х-32. Сдано в  
печать 27-Х-32. Ст.-формат А5 148x210. кол. зн. 88.280  
Упакрайлит № 05558. Заказ № 5126. Газетно-книжн.  
тип. СККПО. Тираж 3.000 экз.

«Ազգային գրադարան»  
  
NL0222976

54.955

№42225

На армянском языке

М. ГИГОЯН

ВОПРОСЫ РАЗВЕРТЫВАНИЯ  
СОВЕТСКОЙ И КОЛХОЗНОЙ  
ТОРГОВЛИ

ПАРТИЗДАТ

Ростов н-д 1932

ул.Энгельса № 90